«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՊՐՈՎԻԶՈՐ, ՆԿԱՐԻՉ ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՍՊԸ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

ՆԱԽԱԲԱՆ

«Պրովիզոր, նկարիչ Լևոն Սարգսյանի» անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է «Պրովիզոր, նկարիչ Լևոն Սարգսյանի» անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ի ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2
ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 5
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 13
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 13
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 13
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 16
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 16
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 19
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 26
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 32
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 38
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 42
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 46
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 51
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 54
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 59
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 63
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 64
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 64
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 66
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 68
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 70
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 72

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

«Պրոֆիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ը հանդիսանում է «Հումանիստ» բժշկական ուսումնարանի, որը հիմնադրվել է 1998թ., իրավահաջորդը: Հիմնադրման պահից գործում է Երևանի Իսահակյան 30 հասցեում՝ վարձակալությամբ: Հիմնադիրն է նկարիչ, պրոֆիզոր (դեղագետ) Լևոն Հովհաննեսի Սարգսյանը: 2000 թվականին մահից հետո, քոլեջն անվանափոխվել է հիմնադրի անունով: 2007 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 3 մասնագիտություն՝ «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Ատամնատեխնիկական գործ», ստացել է պետական հավատարմագրում: Ինստիտուցիոնալ հավատարմագրում քոլեջն անցնում է առաջին անգամ:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Քոլեջի առաքելությամբ սահմանված կրթական գործունեությունը նպատակաուղղված է առողջապահության և սպասարկման ոլորտում, աշխատաշուկայի պահանջներին համահունչ, միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման միջոցով բարձրորակ մրցունակ մասնագետների պատրաստումը:

Քոլեջն իր գոյության ընթացքում տվել է 1716 շրջանավարտ, որոնց մեծ մասն աշխատում է համապատասխան մասնագիտությամբ: Շատ շրջանավարտներ ուսումը շարունակել և շարունակում են տարբեր բուհերում: Քոլեջը յուրաքանչյուր տարի ընդունել է 90-105 դիմորդ: Քոլեջում այսօր միջնակարգ և հիմնական կրթության հիմքով կրթություն է ստանում 272 ուսանող:

Քոլեջում դասավանդում է 38 դասախոս, որից 12-ը հիմնական, 26-ը՝ համատեղող, դասախոսներից 11-ը՝ գործատուներ են, 28 դասախոս բարձրագույն,10-ը՝ միջին մասնագիտական կրթությամբ: Քոլեջում ներկայումս համատեղությամբ աշխատում են շրջանավարտ-դասախոս (դեղագործ) և շրջանավարտ վարչական աշխատակից:

Քոլեջի լիցենզիայով ըստ կուրսերի տրված սահմանային տեղերն են. «Քույրական գործ» մասնագիտության հիմնական կրթության հիմքով 30 տեղ և միջնակարգ կրթության հիմքով 20 տեղ, «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության՝ 25 և 10 տեղ, «Մանկաբարձական գործ» և «Դեղագործություն» մասնագիտությունների՝ 10-ական տեղ, «Կոսմետոլոգիա և դիմահարդարման արվեստ» մասնագիտության՝ 15-ական տեղ:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

«Պրովիզոր-նկարիչ Լ. Սարգսյանի անվան բժշկական քոլեջ»-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ «Պրովիզոր-նկարիչ Լ. Սարգսյանի անվան բժշկական քոլեջ» առաջին անգամ է ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում, գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման փուլում: «Պրովիզոր-նկարիչ Լ. Սարգսյանի անվան բժշկական քոլեջ»-ը գնահատելիս փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ լինելով ոչ պետական ինքնաֆինանսավորվող ՄՈՒՀ, քոլեջն իր գործունեության ընթացքում ձևավորել է կայուն վստահություն իր դիմորդների և գործընկերների մոտ: Փորձագիտական խումբն ընդգծում է վերջին տարիներին քոլեջում տեղ գտած փոփոխությունները, որոնք առնչվում են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների գնահատման տիրույթում գտնվող մի շարք գործընթացների, այդ թվում՝ կառավարմանը և վարչարարությանը, ՄԿԾ-ների արդիականացմանը, հետազոտական բաղադրիչի արժևորմանը և կրթություն- հետազոտություն կապի ձևավորմանը: Քոլեջ ձեռնամուխ է եղել նաև արտաքին կապերի հստակեցմանը և միջազգային կապերի հաստատմանը ուղղված քայլերի իրականացմանը, ներքին և արտաքին շահակիցների համար իր գործունեության թափանցիկության ապահովման մեխանիզմների ներդրմանը:

Տվյալահենք կառավարման տիրույթում ՄՈՒՀ-ի հիմնական ձեռքբերումը կարելի է համարել ռազմավարական պլանավորման գործիքակազմի ներդրումը, որի առաջին փորձառությունը իրականացվել է 2018թ., կարևոր է ընդգծել, որ ներկայումս այդ գործիքակազմը որոշակիորեն համապատասխանեցվել է որակի ապահովման սկզբունքներին: Գործող 2020-2024 ՌԾ-ում՝ սահմանված են առաքելությանը համապատասխան նպատակներ և խնդիրներ, որոնք սահմանելիս ՄՈՒՀ-ը ներգրավել է իր ներքին և արտաքին շահակիցներին, որոշակիորեն առկա է նաև ՌԾ մշտադիտարկման և գնահատման գործիքակազմ՝ ՌԾ պլան ժամանակացույց և արդյունքների գնահատման ցուցիչներ: Այդուհանդերձ, ՄՈՒՀ-ի կողմից առանձնացված ռազմավարական պլանավորման ոլորտները հստակ տարանջատված չեն միմյանցից, մասնավորապես նույն ոլորտի նպատակներ և խնդիրներ կարելի է տեսնել տարբեր առանձին ոլորտներում, սակայն դրանք կարող էին միավորվել որպես մեկ ոլորտ: Օրինակ, ֆինանսական ռեսուրսները, մարդկային ռեսուրսները և ենթակառուցվածքները (նյութական ռեսուրսները) ներկայացված են առանձին ոլորտներով, միևնույն ժամանակ փորձագիտական խումբը ընդգծում է, որ կառավարումը և որակի ապահովումը ներկայացված չեն որպես առանձին ոլորտներ, իսկ վերջիններիս զարգացման ուղղությամբ սահմանված չեն հստակ նպատակներ և խնդիրներ: Թեև գրեթե բոլոր ոլորտներում կան այս տիրույթների հետ հատվող նպատակներ և խնդիրներ, սակայն այս մոտեցումը հնարավորություն չի տվել ՄՈՒՀ-ին լիովին համակարգել գործընթացները և իրականացնել թիրախային բարելավումներ: Վերոնշյալը հանգեցրել է ռազմավարական

պլանավորման մեխանիզմներում որոշակի թերությունների առաջացմանը և ՊԻԳԲ շրջափուլի հատվածային կիրառությանը: Ռազմավարական պլանավորման տեսանկյունից ՄՈՒՀ-ը կարիք ունի փոխկապակցելու գործող պլանավորման փաստաթղթերը՝ մասնավորապես, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը դեռևս չի բխում երկարաժամկետ ՌԾ-ից, առանձին ստորաբաժանումների և բաժինների պլանավորումը նույնպես փոխկապակցված չէ ՌԾ-ի հետ: Պլանավորման փաստաթղթերի տրամաբանական հաջորդականության ապահովումը թույլ կտա ՄՈՒՀ-ին վերահսկել և գնահատել ՌԾ իրականացման ընթացքը: Կարևոր է ընդգծել, որ ՌԾ-ում տրված են արդյունքների գնահատման ցուցիչները, սակայն դրանք փոխկապակցված չեն կոնկրետ ՌԾ խնդիրների հետ, ինչը դժվարացնում է դրանց օբյեկտիվության և չափելիության գնահատումը: Դրական է, որ ՌԾ պլան ժամանակացույցն արտահայտում է ՌԾ խնդիրներից բխող գործողություններից ակնկալվող արդյունքները, որոնք իրենց հերթին հնարավոր չէ փոխկապակցել ՌԾ սահմանված արդյունքների գնահատման ցուցիչների հետ: Մյուս կողմից տեսանելի են պատասխանատուների և գործառույթների համադրություններ, կամ սխալ բաշխում, ինչը իր հերթին բխում է պաշտոնների անձնագրերում համանման գործառույթների առկայությունից: Անդրադառնալով վարչական և ՈւՕ անձնակազմի գործառույթների բաշխմանը հարկ է ընդգծել, որ տեսանելի է պաշտոնի գերբեռնվածություն, օրինակ՝ ուսումնական գծով փոխտնօրենի մոտ, ինչպես նաև տվյալ պաշտոնին ոչ համապատասխան գործառույթների ներառում: Այս համատեքստում փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում ուսումնական գծով փոխտնօրենի պաշտոնի անձնագրով որակի ապահովման գործընթացների վերահսկողության գործառույթը, իսկ որակի ապահովման պատասխանատուի մոտ ուսումնական գործընթացի վերահսկման գործառույթների առկայությունը, որը մի կողմից վտանգում է որակի ապահովման պատասխանատուի անկախ գործունեությունը, մյուս կողմից գնահատողների, կատարողների և վերահսկողությունն իրականացնողների գործառույթները համընկնում են, արդյունքում վտանգվում է գործընթացների օբյեկտիվ գնահատումը և տվյալահենք որոշումների կայացումը: Որակի ներքին ապահովման կառույցի կողմից կրթության իրականացման տարբեր բաղադրիչների նկատմամբ վերահսկողության իրականացումը կարող է ներքին շահակիցների մոտ սխալ պատկերացումներ ձևավորել ՈՆԱԿ դերակատարության վերաբերյալ:

Փորձագիտական խումբը դրական է համարում Որակի ապահովման կենտրոնի ստեղծումը, որի գործունեության համար մշակվել են համապատասխան ներքին իրավական փաստաթղթեր: Ըստ էության, կենտրոնի իրականացրած աշխատանքները հանձինս կենտրոնի պատասխանատուի որոշակի ազդեցություն են ունեցել ՄԿԾ-ների լավարկման համար, այդուհանդերձ որակի ապահովման մշակույթը իր սկզբնավորման փուլում է, իսկ ինստիտուցիոնալ մակարդակում ՄՈՒՀ գտնվում է որակի ապահովման պլանավորման-իրականացման փուլում: Գնահատման գործընթացները հիմնականում ընդգրկում են տարբեր շահակիցների շրջանակներում իրականացվող բավարարվածության գնահատման հարցումները, իսկ դրանց հիման վրա բարելավումները դեռևս հատվածային են իրականացվում: Որակի ապահովման կենտրոնի դերի վերաիմաստավորումը, որակի ապահովման մեխանիզմների բազմազանեցումը, կիրառվող որակի ապահովման մեխանիզմների արդյունավետության գնահատումը, դրանց տարածումը ինստիտուցիոնալ

բոլոր գործընթացների վրա, թույլ կտան ՄՈՒՀ-ին հասնել իր կողմից սահմանված ռազմավարական նպատակների հաջող իրականացմանը, լավարկել տվյալահենք կառավարումը:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման տեսանկյունից փորձագիտական խումբը ընդգծում է, տեսանելի դրական տեղաշարժերը, այդ թվում իրականացվել է ՄԿԾ մասնագրերի մշակման աշխատանքներ՝ հիմք ընդունելով ՊԿՉ-ները, մշակվել են ծրագրային վերջնարդյունքներն՝ ընդհանրացնելով մոդուլային ծրագրերում ուսումնառության արդյունքները, այս աշխատանքներում հաշվի են առնվել նաև գործատուների կարծիքները: Կարևոր է նաև ընտրովի առարկաների ներդրումը ուսումնական պլաններում, ինչպես նաև նախասիրական առարկաների ցանկերի վերանայումը ըստ տվյալ ՄԿԾ-ի պահանջների: Ընտրովի և նախասիրական առարկաները (մոդուլները) ընտրվել են գործատուների և դասավանդողների հետ երկխոսության արդյունքում: Քոլեջը նաև քայլեր է ձեռնարկել հետազոտության և ուսումնառության փոխկապակցման համար, ներդնելով հետազոտական բաղադրիչ դասընթացը, որը պիլոտային ձևով ներկայացվել է քույրական գործ մասնագիտությամբ ուսանողներին, հետագայում ուսումնական պլաններում ներառելու համար: Խրախուսվել է նաև ուսանողների և դասախոսների համատեղ հետազոտական աշխատանքների կատարումը, խմբային հետազոտությունների իրականացումը, հատկացվել են որոշակի ֆինանսական միջոցներ աշխատանքների տպագրության և միջազգային կոնֆերանսների և սեմինարների մասնակցության համար:

ՄԿԾ-ների իրականացման ընթացքի մշտադիտարկման նպատակով, քոլեջը նաև վերահսկողություն է սահմանել դասավանդման և ուսումնառության նյութերի արդիականացմանը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը նպաստող գնահատման գործիքակազմի կիրառությանը: Մշակվել են մոդուլային ծրագրերի գործնական առաջադրանքների փաթեթները, որոնք ներառում են իրավիճակային խնդիրներ, թեստեր, մասնագիտական գործողությունների կատարման ալգորիթմեր: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կիրառվում են ձևավորող գնահատման տարրեր: Այդուհանդերձ բազմաբաղադրիչ գնահատման գործիքակազմը դեռևս լիովին չի ներդրված: Գնահատման ռուբրիկների տեղայնացումը գնահատման ձևերում, թույլ կտա ընդգծել ուսանողի գնահատման օբյեկտիվությունը՝ պարզաբանել միավորի ձևավորման ընթացքը (մեթոդաբանությունը), տեսական գիտելիքների և գործնական կարողությունների դրսևորման մակարդակը:

ՄԿԾ-իրականացման համար նաև կարևոր դերակատարություն ունի քոլեջի ռեսուրսային բազան, այս տեսանկյունից պետք է ընդգծել, որ քոլեջի սեփական ռեսուրսները (շենք շինություն, ուսումնական լաբորատորիաներ, նյութատեխնիկական միջոցներ), բավականին քիչ են, այդուհանդերձ տեսանելի են ռեսուրսների ապահովման նպատակով կատարված քայլերը՝ վարձակալվող տարածքում ստեղծվել են ատամնատեխնիկական և կոսմետոլոգիական լաբորատոր-կաբինետներ, որոնք հագեցված են անհարժեշտ գույքով, քոլեջը օգտագործում է նաև հանրակրթական դպրոցի ուսումնական լաբորատոր կաբինետները, մասցած ռեսուրսները համալրում է բժշկական կենտրոնների, կոսմետիկ կաբինետների, ստոմատոլոգիական պոլիկլինիկայի և կաբինետների հետ համագործակցությամբ, որտեղ նույնպես առկա են վարձակալված ուսումնական կաբինետներ:

Կարևոր է ընդգծել, որ ՄՈՒՀ-ը գործատու ոլորտից ներգրավել է դասավանդող պրակտիկ բժիշկների (մասնագետների), ովքեր աշխատելով համագործակցության բազաներում նպաստում են քոլեջի և գործատու ոլորտի սերտ համագործակցությանը, ինչը նախ և առաջ նպաստում է շրջանավարտների աշխատանքի անցնելուն անմիջապես քոլեջը ավարտելուց հետո, որոշ դեպքերում նաև ուսումնառությանը զուգահեռ:

Քոլեջը ձևավորել է ուսանողակենտրոն միջավայր, ինչը նպաստում է ուսանողների կարիքների վեր հանմանը, ուսանողների, նրանց ծնողների և քոլեջի միջև ակտիվ երկխոսության կայացմանը: Կարևոր է, որ քոլեջը փորձում է նպաստել ուսանողների կարիերայի ձևավորմանը, այդ հարցում էական դերակատարություն ունեն կարիերայի ուղղորդման աշխատանքները ինչպես կրթության շարունակման այնպես էլ աշխատանքի անցնելու համար: Դրական է նաև, որ քոլեջը քայլեր է իրականացրել հետազոտական գործունեության խթանման ուղղությամբ, կիրառելով ներքին մեխանիզմեր խրախուսում է թե՛ դասավանդողների, թե՛ ուսանողների համատեղ հետազոտական գործունեությունը, որոշակի աշխատանքներ են իրականացվել նաև հետազոտական բնույթի աշխատանքների կատարումը կանոնակարգելու ուղղությամբ, այսուհանդերձ փորձագիտական խումբը ընդգծում է առաջիկայում ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրման կարևորությունը, ինչը թույլ կտա քոլեջին արձանագրել իր աշխատանքների արդյունքները:

Միջազգայնացման ուղղությամբ իրականացված քայլերը ներկա փուլում կարելի է գնահատել որպես հավակնոտ, հաշվի առնելով որ գործընթացները դեռևս նոր են ձևավորվում, սակայն քոլեջը արդեն իսկ փորձում է համագործակցել մի շարք ուղղություններով՝ ՄԿԾ բենչմարքինք, էրազմուս+ ծրագրերին մասնակցություն, օտար լեզվի իմացության բարձրացմանը ուղղված միջոցառումներ, մասնակցություն միջազգային նշանակության սեմինարների կոնֆերանսների: Այս տեսանկյունից կարևոր է որ քոլեջը հստակ գնահատի իր հնարավորությունները և նպատակուղղված աշխատանքներ իրականացնի, տարանջատելով իր աշխատանքները ըստ ոլորտների և ակնկալիքների: Այս գործընթացներում կարևոր է, որ քոլեջը զուգահեռաբար բարելավի զարգացնի հասարակության հետ կապի անհրաժեշտ մեխանիզմները, ապահովելով գործընթացների հրապարակայնությունը, ինչպես տեղական այնպես էլ արտասահմանյան գործընկերների համար:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Թիմային աշխատանքը, առաքելության և նպատակների, ՄՈՒՀ-ի զարգացման տեսլականի շուրջ համախմբված աշխատակազմը և համագործակցության բարձր մակարդակը,
2. ուսանողակենտրոն միջավայրը,
3. գործատու ոլորտից հրավիրված դասախոսական անձնակազմը,
4. գործատու ոլորտի հետ սերտ համագործակցությունը,
5. ուսանողների կարիերային նպաստող աշխատանքները՝ աշխատանքի անցնելու, կրթությունը շարունակելու հնարավորությունները:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ռազմավարական պլանավորման մեխանիզմների ձևավորման փուլում լինելը՝ ՌԾ նպատակների և խնդիրների իրագործման ուղիների թերի պլանավորումը,
2. ստորաբաժանումների հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի և ՌԾ-ի արդյունքների գնահատման ցուցիչների հետ փոխկապակցման մեխանիզմների թերի կիրառությունը,
3. հետազոտական գործունեության խթանման և ուսումնառության հետ հետազոտական բաղադրիչի փոխկապակցման ինստիտուցիոնալ մեխանիզմների թույլ կիրառումը,
4. նյութատեխնիկական բազայի ոչ լիարժեք լինելը և գրադարանային ենթակառուցվածքի բացակայությունը,
5. որակի ապահովման ենթակառուցվածքի ոչ անկախ լինելը։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Վերանայել Քոլեջի զարգացման ռազմավարական ոլորտային ուղղությունները, սահմանել և հստակեցնել երկարաժամկետ ռազմավարական առաջնահերթությունները և յուրաքանչյուր ուղղությամբ քոլեջի նպատակները և խնդիրները։
2. Վերանայել ՌԾ-ի (երկարաժամկետ) պլան-ժամանակացույցը՝ հստակեցնել պատասխանատուներին, ռեսուրսները, խնդիրների լուծման համար անհրաժեշտ ժամկետները և հաշվետվողականության մեխանիզմները։
3. Հստակեցնել ՌԾ-ի արդյունքների գնահատման ցուցիչները՝ սահմանելով չափելի (քանակական և որակական) և իրատեսական բնութագրիչներ, փոխկապակցելով դրանք ռազմավարական նպատակների և խնդիրների հետ։
4. Վերանայել կազմակերպական կառուցվածքը, հստակեցնել ստորաբաժանումների ուղղահայաց և հորիզոնական կապերը։
5. Վերանայել պաշտոնների անձնագրերը, հստակ արտահայտել գործառնական կապերը և գործառույթները։
6. Վերանայել պլանավորման գործիքակազմը, քոլեջի կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման փաստաթղթերը փոխկապակցել ՌԾ-ի և այլ երկարաժամկետ պլանավորման փաստաթղթերի հետ, ապահովելով ՌԾ-ի նպատակների և խնդիրների փոխկապակցումը ստորաբաժանումների և պատասխանատուների աշխատանքային պլանների և անմիջական գործունեության հետ
7. Ներդնել տարբեր գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման և թափանցիկության ապահովման գործուն մեխանիզմեր։
8. Բարելավել ստորաբաժանումների հաշվետվողականության և ՌԾ-ի կատարողական ցուցիչների փոխկապակցման մեխանիզմները, ապահովելով ՌԾ-ի արդյունքների գնահատման ցուցիչների և պլանավորման փաստաթղթերում արտահայտված ակնկալվող արդյունքների հստակ փոխկապակցումը, լիարժեք գործարկելով ՊԻԳԲ շրջափուլը։

9. Սահմանել որակի ապահովման ներքին համակարգի զարգացման ռազմավարական առաջնահերթությունները, ոլորտային նպատակները և խնդիրները:
10. Ապահովել Որակի ներքին ապահովման կենտրոնի և պատասխանատուի գործունեության անկախությունը, վերանայելով և համապատասխանեցնելով փաստաթղթային հենքը կենտրոնի գործունեության նպատակներին և խնդիրներին:
11. Վերանայել կարիքների վերհանման համար կիրառվող հարցումների բովանդակությունը և հարցման մեթոդաբանությունը, ուշադրություն դարձնելով օբյեկտիվ և անկողմնակալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծության գործիքակազմի կիրառությանը:
12. Վերա(մշակել) և ներդնել որակի ներքին ապահովման գործուն մեխանիզմներ՝ տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման գործիքակազմ:
13. Ընդլայնել որակի ներքին ապահովման կենտրոնի ներքին և արտաքին շահակիցների շրջանակը, մշակել և ներդնել որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը և հրապարակայնությունը ապահովող մեխանիզմներ և գործիքակազմ:

Որակավորումների արժանահավատ շնորհում

1. Ներդնել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության միասնական մոտեցումներ:
2. Մշակել և ներդնել վերջնարդյունքներին համապատասխան գնահատման մեթոդների կիրառության մեխանիզմներ՝ հստակեցնելով գնահատման չափանիշները
3. Ստեղծել առաջադրանքների շտեմարան՝ միտված հետազոտական, վերլուծական կարողությունների և գործնական հմտությունների ձևավորմանը:
4. Բազմազանեցնել ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները, գնահատելով իրականացրած բարելավումների արդյունքները:
5. բարելավել դասախոսական կազմի ներգրավման և ընտրության մեխանիզմները, ապահովելով անհրաժեշտ մասնագետների առկայությունը, այդ թվում նեղ մասնագիտական մոդուլների դասավանդման համար:
6. շարունակաբար խթանել դասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական վերապատրաստումների մասնակցությունը, հնարավորության դեպքում գործարկել ներքին մեխանիզմներ:
7. բարելավել դասախոսական կազմի գնահատման և խրախուսման մեխանիզմները, այդ գործընթացներում կիրառելով անաչառ, օբյեկտիվորեն չափելի և հուսալի ցուցանիշներ, ապահովելով վերջիններիս թափանցիկությունը ներքին և արտաքին շահակիցների համար:
8. Շարունակաբար բարելավել քոլեջի ենթակառուցվածքները և ռեսուրսները՝ լաբորատորիաներով և կաբինետներով, ինչպես նաև ուսումնական արդի տեխնիկական միջոցներով համալրել ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը, ստեղծել և զարգացնել գրադարանային ենթակառուցվածքը:

9. Մշակել ռեսուրսների համալրման հստակ ռազմավարություն և պլան ժամանակացույց, գնահատելով յուրաքանչյուր ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները, ՄԿԾ-ների ծախսարդյունավետությունը:
10. Մշակել և ներդնել ֆինանսական միջոցների բազմազանեցման հստակ ռազմավարություն, իրականացնել համապատասխան քաղաքականություն և ծրագրեր, բարելավելով ՌԾ-ի և ֆինանսական միջոցների փոխկապակցման մեխանիզմները:
11. Ներդնել փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ, բարելավելով քոլեջի տեխնիկական հագեցվածությունը:

Երկարաժամկետ զարգացում

1. Սահմանել քոլեջի հետազոտական գործունեության համար պատասխանատու օղակները՝ հիմքեր ստեղծելով ՌԾ-ում ներառված հետազոտություն և նորարարություն ուղղության նպատակների և խնդիրների իրականացման գնահատման համար:
2. Հստակեցնել ամբիոնների դերակատարությունը և գործառույթները հետազոտության և ուսումնառության փոխկապակցման մեջ՝ սահմանելով մասնագիտական բնագավառների խնդիրներից բխող հետազոտական ուղղությունները:
3. Ներդնել հետազոտության և ուսումնառության փոխկապակցման գործուն մեխանիզմեր՝ ապահովելով գործընթացների շարունակականությունը:
4. Մշակել և ներդնել դասախոսների և ուսանողների հետազոտական գործունեությունը խրախուսող ինստիտուցիոնալ մեխանիզմեր:
5. Վերանայել արտաքին կապերի և միջազգայնացման բաժնի/ և պատասխանատուի գործունեությանը առնչվող փաստաթղթային հենքը, փոխկապակցելով դրանք իրականացվող գործընթացների հետ, հստակեցնել գործառույթները ըստ բաժնի աշխատանքների
6. Շարունակաբար բարելավել և ընդլայնել համագործակցության շրջանակները տեղական և արտասահմանյան քոլեջների հետ:
7. Մշակել ուսանողների և դասախոսական կազմի միջազգայնացման գործընթացներում ներգրավվածությունը խթանող և ապահովող մեխանիզմեր
8. Վերանայել օտար լեզվի իմացության դասընթացների կազմակերպման մեթոդաբանությունը, հստակեցնել պատասխանատուներին, սահմանել չափելի ակնկալվող արդյունքներ:
9. Գնահատել դիմորդների հավաքագրման մեխանիզմների արդյունավետությունը, սահմանել առաջնահերթություններ:
10. Հստակեցնել և համակարգել շրջանավարտների բազան:
11. Հստակեցնել ՈւԽ-ը հանձնաժողովների դերը աշխատանքների ակտիվացման կարիք ունի:
12. Բարելավել հաշվետվողականության համակարգը՝ ներդնելով հաշվետվությունների իրականացման միասնական համակարգ, ապահովել դրանցում վերլուծական բաղադրիչի կիրառությունը և փոխկապակցումը ՌԾ գործողությունների արդյունքների գնահատման ցուցիչների հետ:

13. Ապահովել քոլեջի կայքեջի անխափան գործունեությունը, որպես գործընթացների և փաստաթղթերի հրապարակայնությունը և թափանցիկությունը ապահովող միջոց
14. Բարելավել հետադարձ կապի ապահովման միջոցները, գնահատել դրանց արդյունավետությունը
15. Մշակել և ներդնել գիտելիքների և արժեքների շարունակական փոխանցմանը նպաստող մեխանիզմներ, ներգրավելով ուսանողական համակազմը։

Ասյա Սիմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

27.12.2024թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

«Պրոֆիզոր, նկարիչ Լևոն Սարգսյանի» անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Ասյա Սիմոնյան**՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Գոհար Սարգսյան**՝ Երևանի հենակետային բժշկական քոլեջի կրթության որակի ապահովման պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ
3. **Շուշանիկ Ասրյան**՝ Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի և կից բազային քոլեջի որակի ապահովման պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ
4. **Անգելինա Տոնոյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողուհի, փորձագիտական խմբի անդամ

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ: Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի քարտուղարության ղեկավար **Անահիտ Ութմազյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պրոֆիզոր, նկարիչ Լևոն Սարգսյանի» անվան բժշկական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 2024 թ. փետրվարի 19-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և ներդիրների, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 3 մասնագիտությունների պետական հավատարմագրման վկայականների պատճեններով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո 2024թ. մարտի 22-ին ուսումնական հաստատության և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր, որը ներառում է հավատարմագրման գործընթացի ժամանակացույցը և նախահաշիվը:

Ինքնավերլուծություն

Պրոֆիզոր, նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացրել է 2024թ. մայիսի 30-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի ներկայացուցիչների կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբն, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ սահմանված ձևաչափի: Վեր են հանվել առկա խնդիրները և պարզաբանման ենթակա հարցերը՝ նշելով թիրախային խմբերը: Կազմվել է լրացուցիչ ուսումնասիրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

2024թ. սեպտեմբերի 10-ին տեղի է ունեցել հանդիպում Պրովիզոր, նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը մասնակցել են ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, գործընթացի համակարգողը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քննարկվել և համաձայնեցվել է փորձագիտական այցի ժամանակացույցը, ներկայացվել է ուսումնասիրության ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի կազմակերպչական, տեխնիկական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ: Քննարկվել են ֆոկուս խմբային հանդիպումների և փորձագիտական խմբի աշխատանքի համար նախատեսված պայմանները:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցի նախորդ օրը փորձագիտական խումբն իրականացրել է քոլեջի ռեսուրսների ու ենթակառուցվածքների դիտարկում, այցելել է բազային կլինիկաներ:
Փորձագիտական այցն իրականացվել է 2024թ. սեպտեմբերի 16-ից 18-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել է տնօրենի և ավարտվել քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների մասնակիցները՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, գործատուներ, ընտրվել են քոլեջի կողմից նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ժամանակացույցով նախատեսված բոլոր հանդիպումներն ու դասալսումները:
Այցի ընթացքում տեղի են ունեցել նաև հանդիպումներ ընտրված 3 մասնագիտական կրթական ծրագրերի՝ «Քույրական գործ», «Ատամնատեխնիկական գործ» և «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ», պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Փորձագիտական խումբը չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացությանը հանգել է բաց քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով փոխհամաձայնության սկզբունքը:

Փորձագիտական գնահատումը կատարվել է՝ ըստ Հավատարմագրման պետական չափանիշների, գնահատման երկաստիճան սանդղակով՝ բավարար և անբավարար:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ և տրամադրվել Քոլեջին:

Քոլեջը փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ դիտողություններ և առարկություններ չի ունեցել:

Փորձագիտական խումբը և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են զեկույցի վերջնական տարբերակը, որը հաստատվել է խմբի անդամների կողմից 2024 թ.-ի դեկտեմբերի 27-ին:

Անահիտ Ութմազյան
Փորձագիտական խմբի համակարգող

27-ը դեկտեմբերի 2024թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: «Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ի առաքելությունը ձևակերպված *է* **2020-2024թթ. Զարգացման ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ):** Քոլեջի առաքելությունն է՝ *«կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, հանրապետության առողջապահական ոլորտի համար, պետական կրթական չափորոշիչներին և միջազգային չափանիշներին համապատասխան, միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը և նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, ազգային և համամարդկային ոգով դաստիարակված անձի և քաղաքացու համակողմանի ձևավորումը, որը նպատակաուղղվում է անհատների, ընտանիքների, հասարակության առողջությանը և կյանքի որակի բարելավմանը»*: Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան: Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված են նաև քոլեջի տեսլականը, հիմնարար արժեքները (ուսանողի հաջողությունը, մատչելի կրթությունը, որակյալ մանկավարժական կազմ, ակադեմիական ազատություն և ազնվություն, ժողովրդավարական միջավայր, սոցիալական գործընկերություն) և ռազմավարական նպատակներն ըստ ուղղությունների:

Քոլեջի հիմնական ռազմավարական նպատակներն/ուղղություններն են՝ որակյալ կրթություն, արդիական հետազոտություն և նորարարություն, հանրային ներգրավում և ծառայություններ, որակյալ մարդկային ռեսուրսներ, որակյալ ենթակառուցվածքներ, որակյալ ծառայություններ, ընդունելության գործընթացներ, ֆինանսական կայունություն և արդյունավետ կառավարում, միջազգայնացում և գործակցություն: Վերոնշյալ ուղղությունների համար սահմանվել են նպատակներ և խնդիրներ, սակայն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ոչ բոլոր ուղղություններով է քոլեջը հստակեցրել իր նպատակները, որոշ դեպքերում նպատակը սահմանված չէ, առաջադրված են միայն խնդիրներ, օրինակ՝ միջազգայնացում և գործակցություն ուղղությունը: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունը ցույց է տալիս, ՌԾ-ի ոլորտային ուղղությունները հստակ տարանջատված չեն, որը տեսանելի է անվանումների և պլանավորված գործողությունների մեջ, օրինակ՝ հանրային ներգրավում և ծառայություններ և որակյալ ծառայություններ: Այս համատեքստում փորձագիտական խումբը ընդգծում է ստորև ներկայացվող մի քանի օրինակներ, դրանք են՝ «Որակյալ կրթություն» ոլորտի խնդիրներում (օրինակ՝ խնդիր 1.3-ը) պլանավորված է որակի ներքին ապահովման

համակարգի գործունեության կատարելագործումը, որի ներքո նախատեսված են ուսանողների հարցումներ, ծրագրերի մշտադիտարկում և այլ գործողություններ: Առկա են պլանավորված գործողությունների կրկնություններ տարբեր ոլորտներում, օրինակ՝ Միջազգայնացում և գործակցություն ոլորտին ուղղված քայլերը կարելի է տեսնել նաև «Արդիական հետազոտություն և նորարարություն» և «Հանրային ներգրավում և ծառայություններ» ոլորտներում (3.1.1, 2.2.1), միջազգայնացման և գործակցության ոլորտում հիմնականում պլանավորված է լեզվամիմացության բարձրացումը, որը որպես խնդիր նշված է նաև «Որակյալ կրթություն» ոլորտում (խնդիր 1.5): Վերոնշյալ խնդիրները առկա են բոլոր ոլորտային ուղղությունների նպատակներում և խնդիրներում:

ՌԾ նպատակների իրականացման համար կազմվել է ՌԾ պլան-ժամանակացույց 2021-2023թթ., որտեղ նշված են գործողություններն ըստ ուղղությունների և առաջադրված խնդիրների, կատարման ժամկետները, պատասխանատուները, պահանջվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները, ակնկալվող արդյունքները: Ռազմավարական ծրագրում և պլան ժամանակացույցում ներկայացված խնդիրները համահունչ են միմյանց, սակայն խնդիրների իրականացման համար պլանավորված գործողությունները տարբերվում են, իսկ գործողությունների ակնկալվող արդյունքները փոխկապակցված չեն ՌԾ-ի առաջընթացի գնահատման ցուցիչների հետ: Պլան-ժամանակացույցը լիովին չի արտահայտում ՌԾ իրականացման ընթացքը, կան գործողություններ, որոնց համար մի քանի պատասխանատուներ են նշանակված: Առկա են ՌԾ-ով նախատեսված գործողություններ, որոնք ընդգրկված չեն պլան ժամանակացույցում, օրինակ՝ խնդիր 1.3, կետ 2. «Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը», կետ 3. «Գործադրել քոլեջի դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և մասնագիտություններում»: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այդ գործողությունները որոշակիորեն իրականացվել են, թեև ներառված չեն եղել պլան ժամանակացույցում:
Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՌԾ նպատակ - խնդիր - գործողություն - ակնկալվող արդյունք և առաջընթացի գնահատման ցուցիչներ տրամաբանական շղթան ոչ միշտ է պահպանվում ՌԾ-ի տարբեր փաստաթղթերի համադրման արդյունքում: Առկա են նպատակներ և խնդիրներ, որոնց իրականացման գործողությունները հստակ և չափելի ձևակերպված չեն, օրինակ. «կարևորել հետազոտական գործունեության միջազգայնացումը՝ որպես քոլեջի գործունեության անհրաժեշտ բաղադրիչ», «կարևորել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության խորացումը» և այլն: Ըստ ինքնավերլուծության և ներկայացված փաստաթղթերի քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները և դասախոսները*:* ՌԾ-ը մշակելիս իրականացվել է ներքին շահակիցների կարիքների վերհանում հարցումների միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները: ՌԾ նախագիծ կազմելիս կազմակերպվել են հանդիպումներ ուսանողների, դասախոսների, ամբիոնի վարիչների հետ, վեր են հանվել խնդիրները և առանձնացվել են ՌԾ-ի հիմնական կետերը:

ՌԾ-ի գնահատման մեխանիզմները ներդրման փուլում են, մշակված են ՌԾ-ի «առաջընթացի գնահատման ցուցիչներ», այդուհանդերձ ցուցիչների բովանդակային

ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք հաճախ չունեն քանակական բնութագրիչներ, օրինակ՝ Խնդիր 1.1-ի «Իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ», համար ցուցիչ է սահմանված «Միջին մասնագիտական կրթության որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխանեցված կրթություն»: Քոլեջի տնօրենի տարեկան հաշվետվությունները (2022, 2023) որոշակիորեն փոխկապակցված են ՌԾ նպատակների հետ, նշվում է յուրաքանչյուր ուղղությամբ իրականացված կամ չիրականացված քայլերը: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի գործունեությունը հիմնականում համապատասխանում է ՌԾ նպատակներին և խնդիրներին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի ռազմավարական ծրագրում սահմանված առաքելությունը, նպատակները և խնդիրները համահունչ են քոլեջի իրականացրած գործունեությանը: Կարևոր է որ 2018թ. քոլեջը անցում է կատարել ռազմավարական պլանավորման գործիքակազմի կիրառությանը, իսկ արդեն 2020-2024 ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքներում ներգրավել է իր ներքին և արտաքին շահակիցներին, այս գործընթացի արդյունքում քոլեջին հաջողվել է իր ռազմավարական ծրագրում առավել հստակ ներկայացնել առաքելությունը, տեսլականը, ընդգծվել են հիմնարար արժեքները, սահմանվել են ռազմավարական ուղղությունները և նպատակները: Փորձագիտական խումբը դրական է համարում շահակիցների ներգրավումը ՌԾ-ի մշակման աշխատանքներին, որը հնարավորություն է տվել քոլեջին վեր հանել որոշ խնդիրներ և դրանք որպես առաջնահերթություն ներառել ռազմավարական ծրագրում, ինչպես նաև սեղմ ժամանակահատվածում ռազմավարական տարբեր ուղղություններով քայլեր ձեռնարկել, կարևոր է, որ շահակիցների ներգրավումը լինի շարունակական ինչպես ՌԾ-ի մշակման այնպես էլ հետագա մշտադիտարկման, գնահատման և բարելավման աշխատանքներում:

Այդուհանդերձ, փորձագիտական խումբը ընդգծում է, որ քոլեջի կողմից առանձնացված ոլորտները դեռևս հստակ տարանջատված չեն, նշված խնդիրը որոշակիորեն անդրադառնում է ոլորտային նպատակների և խնդիրների սահմանման վրա, կարելի է տեսնել համանման գործողություններ պարունակող մի քանի ոլորտներ, այս պարագայում դժվար է գնահատել պլանավորված գործողություններից ակնկալվող արդյունքների արդյունավետությունը: Մյուս կողմից, որոշ դեպքերում փաստաթղթերում ռազմավարական ոլորտ և ռազմավարական նպատակ հասկացությունները մեկտեղվում են, (միջազգայնացում և արտաքին գործակցություն) ինչը կարող է անդրադառնալ տվյալ ոլորտի շարունակական զարգացման վրա, կարևոր է, որ քոլեջը հստակեցնի ՌԾ-ի պլանավորման ոլորտները, դրանք տարանջատելով միմյանցից, յուրաքանչյուրի համար սահմանել առաջնահերթություններ և դրանցից բխող նպատակներ և խնդիրներ:

Քոլեջը նաև փորձ է կատարել ներդնել ՌԾ իրականացման պլան ժամանակացույցը ներառելով ՌԾ խնդիրները և դրանց լուծման համար անհրաժեշտ գործողությունները, սահմանելով պատասխանատուներ, ժամկետներ և անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները, այդուհանդերձ տեսանելի է միևնույն գործողության համար մի քանի

պատասխանատուների նշանակումը, որը կարող է հանգեցնել գործառույթների կրկնությանը, մյուս կողմից թույլ վերահսկելի է դառնում ակնկալվող արդյունքների վերաբերյալ հաշվետվողականությունը:

Հաշվետվողականության ապահովման և արդյունքների գնահատման համար կարևոր է պլան ժամանակացույցով նախատեսվող ժամկետների հստակեցումը, ինչը թույլ կտա պատասխանատուներին գործողությունները ներառել աշխատանքային պլաններում և հաշվետվություն տալ արդյունքների վերաբերյալ, ինչը ընդհանուր առմամբ կհանգեցնի ՌԾ կատարողական ցուցիչների բարելավմանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև ՌԾ-ի նպատակների, խնդիրների իրականացման համար իրատեսական և չափելի գործողությունների պլանավորումը, որը թույլ կտա ՄՈՒՀ-ին բարձրացնել իր կատարողական ցուցանիշները և հասնել ՌԾ-ով նախատեսվող արդյունքներին:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև ՌԾ-ում առաջընթացի գնահատման ցուցիչների սահմանումը, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք փոխկապակցված չեն ՌԾ խնդիրների և գործողությունների հետ, մյուս կողմից այդ ցուցիչները փոխկապակցված չեն նաև ՌԾ պլան ժամանակացույցի մեջ սահմանված ակնկալվող արդյունքների հետ: Վերոնշյալ բացը կարող է հանգեցնել պլանավորման և իրականացման միջև կատարողական շեղումների առաջացմանը: Այս տեսանկյունից կարևոր է, որ ակնկալվող արդյունքները և առաջընթացի գնահատման ցուցիչները սահմանված լինեն քանակական և որակական չափելի բնութագրիչներով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջն ունի հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին, նպատակների և խնդիրների սահմանման գործում ներգրավված են ներքին և արտաքին շահակիցները, ներդրվում են ՌԾ-ի գնահատման և բարելավման գործիքակազմ և մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: «Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ (այսուհետ՝ Քոլեջ) ընթացիկ կառավարումն իրականացվում է տնօրենի ժ/պ-ի, Կառավարման և Մանկավարժական խորհուրդների կողմից: 2021 թվականին ՍՊԸ Ընդհանուր ժողովի որոշմամբ ստեղծվել է ՄՈՒՀ-ի Կառավարման խորհուրդը նպատակ ունենալով բարելավել վարչարարության թափանցիկությունը և այդ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ

Կառավարման խորհրդում արտաքին շահակիցների ներգրավման նպատակով քոլեջի տնօրենը (ներկայումս տնօրենի ԺՊ) դիմել է ՀՀ գործատուների միությանը, ովքեր առաջադրել են երկու թեկնածուներ, մեկը սոցիալական գործընկեր, մյուսը մասնագիտական (առողջապահական) ոլորտի ներկայացուցիչ: Այդուհանդերձ ներկա փուլում տնօրենը լինելով ընդհանուր ժողովի անդամ, նաև հանդիսանում է Կառավարման խորհրդի անդամ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի կառավարման համակարգը և նրա տարրերի զարգացումը առանձին ոլորտային ուղղվածություն չունի ՌԾ-ում, այն ընդհանրացված է «Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում» ոլորտում, սակայն կառավարման բարելավմանը միտված խնդիրներ կարելի է տեսնել նաև այլ, օրինակ՝ որակյալ մարդկային ռեսուրսներ ոլորտում (խնդիր 4.2): Քոլեջի ռազմավարական ծրագրում առկա է բյուջեի պլանավորում ըստ ռազմավարական ուղղությունների և սահմանված նպատակների, այդուհանդերձ պլանավորումը չի արտահայտում բյուջեի բաշխումը ըստ տարիների: Քոլեջի 2022-2024 ՌԾ պլան-ժամանակացույցում որոշակիորեն տեսանելի են ռազմավարական նպատակներին հասնելու և պլանավորված գործողությունների իրականացման համար պահանջվող լրացուցիչ ֆինանսական միջոցները, սակայն հիմնականում գերակշռում է «ըստ անհրաժեշտության» հատկացումները: Մյուս կողմից պլան ժամանակացույցում և ՌԾ-ում ներկայացված ֆինանսական բաշխումը հստակ փոխկապակցված չեն:

Ֆինանսների բաշխումը քոլեջը իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ 2023-2024թթ., 2024-2025թթ. ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծերի հիման վրա, ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձերը համապատասխանաբար՝ 68% և 70,3%, ուսումնական բազաների վարձակալական ծախսեր՝ 5.3% և 4.1%, գույք, սարքավորումների ձեռքբերում՝ 1% և 1.3%, վերանորոգում՝ 1% և 1.6%, պարգևատրում և խրախուսում՝ 1.2% և 1.9%, պրակտիկայի ծախսեր ՝ 1% ինչպես նաև ուսումնական նյութերի ձեռքբերումը՝ 0.8% և 1,3%, հիմք ընդունելով ստորաբաժանումների ներկայացրած պահանջագրերը: Հարկ է նշել, որ աշխատավարձերին հատկացվող գումարը վերջին 4 տարիներին դինամիկ աճել է 52%-ից 70.3%, ընդ որում բարձրացվել է դասավանդողների աշխատավարձը: Նույն ժամանակահատվածում գրանցվել է բյուջեի մշտական աճ, իսկ դրական մնացորդը տատանվում է 4.6%-ից 2%-ի սահմաններում: 2022-2023 ուսումնական տարվանից սկսած բյուջեի նախահաշվում հետազոտության և զարգացման հոդված է ներառվել՝ հատկացնելով 0.7-0.5% միջոցներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տնօրենի և հաշվապահի նախաձեռնությամբ յուրաքանչյուր ամսվա համար իրականացվում է ֆինանսական ծախսերի մոնիթորիգ, փորձելով կառավարել ընթացիկ ռիսկերը:

ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա կապերը ըստ ենթակայության և հաղորդակցության, որտեղ հիմնականում արտահայտված են ուղղահայաց կապերը, ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերը հիմնականում չեն ընդգծվում: Քոլեջում գործող խորհուրդների, ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում է պաշտոնների հրահանգներով (պաշտոնների անձնագրերով) և խորհուրդների կանոնակարգերով: ՄՈՒՀ-ը 2021-2023 թթ. իրականացրել է որոշակի կառուցվածքային փոփոխություններ, ստեղծվել են

Կարիերայի և պրակտիկայի ուղղորդման ստորաբաժանումը, Որակի ներքին ապահովման կենտրոնը, քոլեջը ներդրել է նաև Հասարակության հետ կապերի լրատվության բաժինը, ինչպես նաև Արտաքին կապերի և միջազգային համագործակցության բաժինը: Նշված բաժինների համար մշակվել են համապատասխան կանոնակարգեր, սակայն բաժինները դեռևս համալրված են միայն բաժնի ղեկավար-պատասխանատուներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի վարչական աշխատողները ներգրավված են նաև քոլեջի դասավանդման գործընթացում: Պաշտոնների անձնագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա են գործառույթների անհամապատասխանության դեպքեր: Օրինակ՝ Ուսումնական գծով փոխտնօրենը ըստ պաշտոնի անձնագրի համակարգում է որակի ապահովման ներքին աշխատանքները և գնահատում որակի ապահովման պատասխանատուի աշխատանքային փաթեթները, իսկ Որակի ապահովման պատասխանատուի գործառույթներում ներառված է կրթական գործընթացների վերահսկողությունը: Ինչպես նաև տեսանելի են պաշտոնի անձնագրով չնախատեսված գործառույթների իրականացման դեպքեր՝ Որակի ապահովման պատասխանատուի կողմից է մշակվել նաև քոլեջի հետազոտական աշխատանքների իրականացման ժամանակացույցը, օտար լեզվի դասընթացների մշակումը:

Դասախոսական և ուսանողական համակազմերը ընդգրկված են կառավարման և մանկավարժական խորհուրդներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս խորհուրդներում ներգրավված ուսանողները և դասախոսները ոչ միշտ են նախաձեռնողական կարիքների վերհանման հարցում: Այդուհանդերձ տեսանելի չեն նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման և մյուս շահակիցներին դրանց մասին իրազեկման քայլերը: Առկա են մասնավոր դեպքեր, երբ Կառավարման խորհրդում բարձրաձայնված խնդիրը լուծում է գտել: Թեև ինստիտուցիոնալ մեխանիզմները դեռևս թույլ են գործում, սակայն ներկա փուլում մեծ դերակատարություն ունի գործընկերային միջավայրի առկայությունը և ոչ ֆորմալ հաղորդակցությունը:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորմամբ: Երկարաժամկետ պլանավորման փաստաթուղթը 2020-2024 ՌԾ-ն է: Ինքնավերլուծության համաձայն քոլեջի միջնաժամկետ պլանավորման փաստաթուղթն է 2021-2023թթ. ՌԾ պլան- ժամանակացույցը, իսկ կարճաժամկետը 2023-2024 պլան-ժամանակացույցը: 2021-2023թթ. ՌԾ-ով նախատեսված աշխատանքների գնահատման արդյունքում կազմվել է անցումային բարելավման պլան, վերանայվել է գործող պլան ժամանակացույցը և կատարման տեսանկյունից իրատեսական գործողությունները ներառվել են 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանում: Վերոնշյալ գնահատման արդյունքում մշակվել և Կառավարման խորհրդի կողմից հաստատվել է նաև 2025-2029 ՌԾ-ն: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ 2025-2029 ՌԾ-ում ներառվել այն գործողությունները և նպատակները, որոնք հնարավոր չի եղել իրականացնել 2020-2023թթ. ընթացքում, հարկ է նշել, որ 2025-2029 ՌԾ-ում տեսանելի են միայն երեք ոլորտային նպատակներ, մասնավորապես՝ նշվում է. «Քոլեջի հնգամյա գործունեության ուղենիշները ռազմավարական երեք նպատակներ են՝ «Բարձրորակ կրթություն, Կրթություն և հետազոտություն, Հանրային ներգրավում», որոնցից յուրաքանչյուրի իրականացման համար նախատեսված են համապատասխան խնդիրներ և դրանց լուծումն ապահովող գործողություններ»:

Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են կարճաժամկետ՝ տարեկան, պլանավորմամբ։ Փաստաթղթերի դիտարկումը ցույց տվեց, որ աշխատանքային պլաններում հիմնականում ներառված են պաշտոնի հրահանգով նախատեսված գործառույթների իրականացում, սակայն աշխատանքային պլանները փոխկապակցված չեն ՌԾ-ի նպատակների և խնդիրների հետ, իսկ ներկայացված գործողությունները տարեց տարի կրկնվում են, օրինակ՝ Կարիերայի և պրակտիկայի ուղղորդման աշխատանքների պատասխանատուի, Միջազգային համագործակցության պատասխանատուի։ Ընդհանուր առմամբ աշխատանքային պլաններում ներկայացված են պլանավորված գործողությունները, ժամկետները՝ տվյալ ուստարվա համար, սակայն սահմանված չեն արդյունքների գնահատման չափելի ցուցիչներ։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջում կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարմամբ, իսկ հաշվետվողականությունը՝ ներքևից վերև։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա են գործողություններ, որոնք իրականացվում են մի քանի պատասխանատուների կողմից, օրինակ դասախոսների գնահատումը և վարկանիշավորումը իրականացնում են ամբիոնները, ՈՆԱԿ, ուսումնական գծով փոխտնօրենը, իսկ արտաքին կապերի հաստատումը՝ կարիերայի և պրակտիկայի, արտաքին և միջազգային կապերի պատասխանատուները։ ՄՈՒՀ-ը որպես ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմ դիտարկում է հաշվետվությունները, արձանագրությունները՝ ՄՈՒՀ-ի հաշվետվողականության ապահովման ընթացակարգին համապատասխան, կիսամյակային և տարեկան կտրվածքով։

Հաշվետվությունների դիտարկումը ցույց է տալիս, որ տարեկան հաշվետվությունները հիմնականում կրում են նկարագրական բնույթ, որոշ վերլուծական մոտեցումներ առկա են օրինակ՝ տնօրենի և ուսումնական գծով փոխտնօրենի հաշվետվություններում ներկայացվում են իրականացված գործողությունները և այն խնդիրները որոնք լուծում չեն ստացել։

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը հիմնականում կատարվել է 2020-2024 ՌԾ-ում ներկայացված քոլեջի առկա վիճակի SWOT վերլուծության միջոցով։ Արդյունքում որոշակիորեն վեր հանվել են քոլեջի հիմնախնդիրները, սահմանվել են նպատակները։

Քոլեջը ՈՆԱԿ-ի հարցումների միջոցով իրականացնում է ներքին խնդիրների վերհանում, օրինակ՝ բավարարվածության հարցումներ, դասավանդման գնահատում, ռեսուրսներից բավարարվածություն և այլն։

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների որոշակի ուսումնասիրություն իրականացվում է կարիերայի կենտրոնի կողմից՝ աշխատաշուկայի ուսումնասիրության և արտաքին շահակիցների հետ համագործակցության և հետադարձ կապ ապահովելու միջոցով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը ուսումնասիրել է իր գործունեության վրա ազդող որոշ գործոններ, օրինակ՝ այլ քոլեջներում ուսման վարձավճարի չափը, փորձելով վարել ավելի մատչելի ծառայություն մատուցելու քաղաքականություն, ուսումնասիրվել է նաև դիմորդների համար կազմակերպվող նախապատրաստական դասընթացների արդյունավետությունը։ Այդուհանդերձ վերոնշյալ օրինակները հատվածային

են և չունեն համակարգված բնույթ։ Ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և ռիսկերի վերհանման համար այլ մշակված գործիքակազմ քոլեջը դեռևս չունի։

Քոլեջը փորձ է կատարել տարբեր գործընթացներում ներդնել ՊԻԳԲ սկզբունքները, օրինակ գնահատելով 2021-2023թթ. պլան ժամանակացույցը, կազմել է բարելավման պլան և մշակել 2023-2024 ՌԾ պլան ժամանակացույցը՝ հաշվի առնելով կատարված և չկատարված գործողությունները, դասավանդողների գնահատման դեպքում նույնպես հարցումների արդյունքների հիման վրա, անհրաժեշտության դեպքում վեր հանված խնդրի շուրջ որոշակի մեթոդական աշխատանքներ են իրականացվում դասավանդողների հետ։ Այդուհանդերձ կան բազմաթիվ նոր ներդրված փաստաթղթեր և գործընթացներ, որոնք դեռևս չեն անցել ՊԻԳԲ շրջափուլով, օրինակ՝ հետազոտական բաղադրիչ, դասավանդողների վարկանիշավորում և այլն։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա հիմնական գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլերում։

Քոլեջում տեղեկատվության հավաքագրման հիմնական մեխանիզմ է արձանագրությունները, հարցումները, քոլեջի վերաբերյալ ամփոփ տվյալներ կարելի է տեսնել նաև տնօրենի տարեկան հաշվետվության մեջ։ Այդուհանդերձ տվյալների միասնական էլեկտրոնային բազաները նոր են ձևավորվում։ Տարիների ընթացքում հավաքագրված տվյալները հիմնականում թղթային են։

Քոլեջը դեռևս չունի տեղեկատվության հավաքագրման մեխանիզմների արդյունավետությունը գնահատող գործիքակազմ։ Հաշվետվողականության ընթացակարգով սահմանվող տեղեկատվությունը քոլեջի կայքէջում դեռևս ներկայացված չէ, այն վերագործարկման փուլում է, իսկ ֆեյսբուքյան էջում լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները, սակայն մասնավորապես քոլեջի ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակում չի իրականացվում, հիմնականում ապահովված չէ կառավարման որոշումների թափանցիկությունը արտաքին շահակիցների համար։

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է Քոլեջում կառավարման բարելավման ուղղությամբ արված քայլերը, մասնավորապես կառավարման խորհրդի ստեղծումը, որը կարող է նպաստել թափանցիկությանն ու օբյեկտիվությանը։ Սակայն տնօրենի միաժամանակ ներգրավվածությունը մի քանի օղակներում կարող է նվազեցնել կոլեգիալ կառավարման արդյունավետությունը, քանի որ տնօրենը ներկայում թե՛ հաշվետու է, թե՛ գնահատող։

Խումբը դրական է համարում ռազմավարական պլանավորման գործիքակազմի ներդրումը, նպատակների և խնդիրների սահմանումը։ Սակայն մտահոգիչ է, որ կառավարումն ու որակի ապահովումը առանձնացված չեն որպես ինքնուրույն ոլորտներ, ինչը սահմանափակում է կառավարման համակարգի ու որակի զարգացման քայլերի գնահատման հնարավորությունը։

Ֆինանսական պլանավորման տեսանկյունից գնահատվում է ՌԾ-ի և ֆինանսների երկարաժամկետ կապը, սակայն ռեսուրսների բաշխման և ծախսերի միջև հստակ փոխկապակցություն չի ապահովվում։ Տարեկան բյուջեի հիման վրա ֆինանսական պլանավորումը երկարաժամկետ պլանների իրատեսականությունը դարձնում է խնդրահարույց։

Դրական է նաև աշխատավարձերի բարձրացման և ռազմավարական ծախսերի դինամիկան, սակայն ՌԾ-ի և ֆինանսական կատարողականի միջև կապը բացակայում է: Ֆինանսների բաշխման և կատարողականի համակարգված կապը կօգնի կանխատեսել կարճաժամկետ ու երկարաժամկետ ռիսկերը և հնարավորությունները:
Կազմակերպական կառուցվածքի փոփոխությունները, մասնավորապես ստորաբաժանումների ստեղծումը, դրական քայլ են, սակայն անհրաժեշտ է գնահատել դրանց իրական անհրաժեշտությունը: Ներկայում բաժինների ֆորմալ լինելու և գործառույթների կրկնության խնդիրներ կան, ինչը պահանջում է ճշգրտում:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում ուսումնական գծով փոխտնօրենի և որակի ապահովման պատասխանատուի պաշտոնների անձնագրերում փոխադարձ վերահսկողության գործառույթների առկայությունը, վերոնշյալը բացասաբար կարող է անդրադառնալ ՈՆԱԿ-ի օբյեկտիվ գործունեության վրա: Կարևոր է, որ կառավարման համակարգը ապահովի ՈՆԱԿ-ի անկախ դիրքը ոչ միայն կազմակերպական կառուցվածքով, այլ նաև ներքին իրավական ակտերի միջոցով, որը թույլ կտա ՄՈՒՀ-ին գնահատել իր գործունեության բոլոր կողմերի արդյունավետությունը՝ այդ թվում կառավարման համակարգի: Անդրադառնալով ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությանը, իրենց առնչվող որոշումների կայացմանը, ապա անհրաժեշտ է ընդգծել, որ ՄՈՒՀ-ը բավականաչափ քայլեր է ձեռնարկել այս ուղղությամբ: Այնուամենայնիվ, իրենց առնչվող որոշումների մասին իրազեկման, կառավարման օղակներում ներքին շահակիցների կարիքների վեր հանման համար ավելի շատ գործում են ոչ ֆորմալ մեխանիզմները, ինչին որոշակիորեն նպաստում է քոլեջում ձևավորված համագործակցային միջավայրը, իսկ ինստիտուցիոնալ մեխանիզմները դեռևս թույլ են գործում: Գնահատված չէ նաև կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը, որը կարևոր պայման է կառավարման համակարգում ներքին շահակիցների արդյունավետ ներգրավումը շարունակաբար բարելավելու համար, աստիճանաբար զարգացնելով ինստիտուցիոնալ մեխանիզմները:

Պլանավորման փաստաթղթերի դիտարկումը ցույց տվեց, որ տարբեր մակարդակներում ստեղծված փաստաթղթերը փոխկապակցված չեն ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների հետ: Մյուս կողմից տեսանելի է, ոչ ճիշտ տերմինաբանության կիրառում, օրինակ ՌԾ-ը դիտարկվել է երկարաժամկետ պլան, իսկ ՌԾ պլան-ժամանակացույցը միջնաժամկետ, որը իրականացվել է երեք տարի, իսկ վերջին տարվա համար վերանայված պլան-ժամանակացույցը՝ կարճաժամկետ: Ըստ այդմ տեսանելի չեն երկարաժամկետ պլանից բխող միջնաժամկետ պլանավորման և համապատասխանաբար կարճաժամկետ պլանավորման փաստաթղթերի կապը: Փորձագիտական խումբը ընդգծում է, որ ՌԾ-ի արդյունքների գնահատման ցուցիչները հստակ և չափելի պետք է գնահատեն ստորաբաժանումների կողմից իրականացված խնդիրներից և գործողություններից ակնկալվող արդյունքների ձեռքբերման աստիճանը, որը ներկայումս փաստաթղթերի միջև հստակ փոխկապակցման բացակայության պատճառով լիարժեք չի կարող իրականացվել: Վերոնշյալ տրամաբանական շղթայի պահպանումը թույլ կտա ՄՈՒՀ-ին հստակ փոխկապակցել ստորաբաժանումների աշխատանքները ՌԾ-ի հետ և համապատասխան պատասխանատուների հաշվետվություններում տեսանելի դարձնել ՌԾ իրականացման ընթացքը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ իր գործունեության վրա ազդող գործոնների որոշակի ուսումնասիրություններ է իրականացվել, օրինակ այլ քոլեջներում ուսման վարձի չափը, նախապատրաստական պարապմունքների արդյունավետությունը և այլն: Ներքին գործոնների ուսումնասիրությունը հիմնականում կատարվում է հարցումների միջոցով, ուստի կարևոր է, որ գնահատվի կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը: Փորձագիտական խումբը կարևորում է, որ այդ ուսումնասիրությունները բազմազանեցվեն ըստ քոլեջի արտաքին կապերի և իրականացրած գործունեության ոլորտին վերաբերվող խնդիրների, որոնք ուղղակի կամ անուղղակի կարող են հնարավորություններ կամ ռիսկեր առաջացնել երկարաժամկետ հեռանկարում:

Դրական է, որ քոլեջում ձևավորված համագործակցային միջավայրը և թիմային աշխատանքը նպաստում են կառավարչական որոշումների տարածմանը, որոշակիորեն ապահովելով ներքին վերևից ներքև հաշվետվողականությունը, սակայն փորձագիտական խումբը նաև կարևորում է ինստիտուցիոնալ հաշվետվողականության մեխանիզմների զարգացումը, որը կառավարման համակարգի կայունության երաշխիքն է:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կազմակերպական կառուցվածքում առկա են ստորաբաժանումների գործառույթների կրկնություններ, նյութական, մարդկային և ֆինանսական ռեսուրսները սահմանափակ են, ՊԻԳԲ շրջափուլը դեռևս իրականացման փուլում է, կարճաժամկետ և երկարաժամկետ աշխատանքային ծրագրերը փոխկապակցված չեն, մշտադիտարկման մեխանիզմները ձևավորման փուլում են, իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը սահմանափակ է և չի նպաստում տվյալահենք որոշումների կայացմանը, ՄԿԾ-ները և այլ գործընթացները գնահատող, ինչպես նաև քանակական և որակական տեղեկատվության թափանցիկությունն ապահովող մեխանիզմները լիարժեք չեն գործում, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր «Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ, ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակի պահանջներին և քոլեջի կողմից սահմանված առաքելությանը համապատասխան իրականացնում է 4 միջին մասնագիտական բժշկական կրթական ծրագրեր հետևյալ մասնագիտություններով՝ «Քույրական գործ» («Բուժքույր/բուժեղբայր» որակավորում), «Մանկաբարձական գործ» («Մանկաբարձ» որակավորում), «Դեղագործություն» («Դեղագործ» որակավորում), «Ատամատեխնիկական գործ» («Ատամատեխնիկ» որակավորում), և սպասարկման ոլորտի 1 կրթական ծրագիր՝ «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» («Դիմահարդար-կոսմետոլոգ» որակավորում): Քոլեջում ուսումնական գործընթացը կազմակերպվում է առկա ուսուցմամբ՝ միջնակարգ (12-ամյա) և հիմական ընդհանուր կրթության (9-ամյա) հիմքերի վրա: Մասնագիտական կրթական ծրագրերը իրականացնելիս քոլեջը առաջնորդվում է պետական կրթական չափորոշիչներով (ՊԿՉ) և մոդուլային ծրագրերով:

2023թ. մշակվել են բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի նկարագրերը, որտեղ սահմանված են՝ մասնագիտական գործունեության բնութագիրը, պարտականությունները, մասնագիտական կրթական ծրագրի առանցքային, ընդհանուր և հատուկ մասնագիտական վերջնարդյունքները, կադրային համապատասխանությունը, ուսումնական գործընթացի և պրակտիկայի կազմակերպման նկատմամբ պահանջները՝ համաձայն ՊԿՉ-ների: Հատուկ մասնագիտական վերջնարդյունքների ներքո ընդհանրացվել են նույնանուն մոդուլների ուսումնառության արդյունքները:

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերանայվել են ուսումնական պլանները: Օրինակ՝ «Քույրական գործ» ՄԿԾ-ի ուսումնական պլանում իրականացվել է՝ «Քույրական գործը թերապիայում», «Քույրական գործը վիրաբուժությունում», «Քույրական գործը մանկաբուժությունում» հատուկ մասնագիտական մոդուլների ժամերի վերաբաշխում, ինչի արդյունքում պետական ամփոփիչ ատեստավորման քննություններում ներառված վերոհիշյալ մոդուլների ուսուցումը շարունակվում է նաև ավարտական կուրսում:

Վերանայման արդյունքում ներդրվել է միջանկյալ ատեստավորման քննություններ հանրակրթական առարկաների համար՝ հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն, մաթեմատիկա: Ներդրվել են նաև կամընտրական առարկաներ բոլոր ՄԿԾ-ներում՝ «Կլինիկական դեղաբանությունը», «Իմպլոնտոլոգիան» և «Դիետոլոգիան», ինչպես նաև նախասիրական առարկաներ՝ «Ընտանեական կյանքի նախապատրաստումը», «Բարոյագիտությունը» և «Առողջ ապրելակերպը», առարկաների ընտրությունն իրականացվել է հաշվի առնելով գործատու դասախոսների և ուսանողների առաջարկությունները: Ուսումնական պլաններում առկա պահուստային ժամերը դեռևս չեն օգտագործվում:

Քոլեջը կարևորելով դասավանդման գործընթացի արդիականացումը 2023թ.. մշակել է «Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության կանոնակարգ»-ը:

Տարբեր ՄԿԾ-ների մի քանի մոդուլների համար քոլեջը փորձ է կատարել ուսումնառության արդյունքներին համապատասխան ներկայացնել դասավանդման, ուսումնառության, մեթոդների և ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների քարտեզագրումը, այդուհանդերձ այս փորձը դեռևս լիովին չի տարածվել ինստիտուցիոնալ մակարդակով: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ կանոնակարգը ներդրման փուլում է, դասախոսներն ազատ են մեթոդների ընտրության մեջ և դեռևս չկա միասնական մոտեցում դասավանդման, ուսումնառության մեթոդների ընտրության հարցում: Դասախոսներին մեթոդների ընտրության հարցում աջակցում է ուսումնական գծով փոխտնօրենը, կազմակերպվում են դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառմանը նվիրված դասընթացներ: Դասալսումներից և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասերի ընթացքում կիրառվում են ավանդական և ինտերակտիվ դասավանդման մեթոդներ օրինակ՝ դասախոսություն, զրույց, բանավեճ, դերային խաղ, դասավանդման նյութը (կարևոր դրույթները) հիմնականում թելադրվում է, տեսական նյութը քննարկվում է դասախոսի հետ լսարանում հարց-պատասխանի մեթոդով, գործնական պարապմունքներն անցկացվում են քոլեջի կաբինետ-լաբորատորիաներում, բուժկենտրոններում, ատամնատեխնիկական լաբորատորիայում, էսթետիկ բժշկության կենտրոնում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների թղթապանակները ներառում են մոդուլային ծրագրեր, օրացուցային թեմատիկ պլաններ, ուսումնառության նյութեր, հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ, թեստային առաջադրանքներ, որոնք կազմված չեն ըստ բարդության և նշված չեն քայլերի միավորները, գրաֆիկական գծապատկերներ: Որոշ դասախոսների մոտ առկա էին դասի պլաններ, չեկլիստերի ձևաթերթեր (մասնագիտական գործողությունների կատարման պարտադիր հերթականության ալգորիթմ), սակայն լրացված օրինակներ առկա չեն: ՄԿԾ-ների որոշ մոդուլների համար մշակվել են գործնական առաջադրանքների փաթեթներ, օրինակ՝ «Քույրական գործի հիմունքներ», «Ձեռքերի և ոտքերի հարդարման իրականացում», «Գեղազարդական կոսմետոլոգիա և դիմահարդարման իրականացում» մոդուլները, սակայն այս մոտեցումը ներդրված չէ բոլոր մոդուլներում: Քոլեջում դասավանդման և ուսումնառության նյութերի և ուսանողներին տրվող հանձնարարականների միասնական բազա ըստ ՄԿԾ-ների դեռևս ձևավորված չէ, սահմանված չեն ուսումնառության նյութերի և հանձնարարականների մշակման և տրամադրման հստակ պահանջներ:

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկա: Պրակտիկան կազմակերպվում է 2022թ. մշակված «Պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգ»-ի համաձայն: 2023թ. պրակտիկայի ծրագրերը վերանայվել են մոդուլային ծրագրերին համապատասխան, ներկայացված են պրակտիկայի տեսակը, մոդուլը, ժամաքանակը, նպատակը և խնդիրները, ինչպես նաև ՄԿԾ-ների և պրակտիկայի ծրագրի վերջնարդյունքների քարտեզագրում:

Անհրաժեշտ է նշել, որ քոլեջը վերը նշված բոլոր պրակտիկաներն, ինչպես նաև գործնական պարապմունքների մեծ մասը կազմակերպում է՝ «Քույրական գործ» մասնագիտության համար «Արմենիա» ԲԿ-ում, «Գրիգոր Նարեկացի» ԲԿ-ում-, «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության համար «Բելլա դենտ

ատամնաբուժարանում», «Ռուդլիթ» ատամնատեխնիկական լաբորատորիայում, «Օլեգ» ատամնատեխնիկական ձուլարանում և «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտության ուսանողների համար «Իդեն» էսթետիկ բժշկության կենտրոնում, «Տոմաբայ» գեղեցկության սրահում և Հ. Պարոնյանի անվան թատրոնում, որտեղ ուսանողները հնարավորություն ունեն զարգացնելու իրենց գործնական կարողությունները, օգտվելով գործընկերների ռեսուրսներից: Գործատուների առաջարկությամբ պրակտիկայի ընթացքում «Քույրական գործ» մասնագիտության ուսանողները կամավորության սկզբունքով իրականացնում են հերթապահություններ հիվանդանոցների համապատասխան բաժանմունքներում: Պրակտիկաների ընթացքը վերահսկվում է քոլեջի կարիերայի և պրակտիկայի պատասխանատուի կողմից: Պրակտիկայի ընթացքում ուսանողները լրացնում են օրագրեր, որտեղ ամփոփում են իրենց կատարած աշխատանքները օրինակ՝ հիվանդների զննում, գործիքների ախտահանում, համակարգերի պատրաստում, ձուլվածքի մշակում և այլն: Պրակտիկան գնահատվում է տարբերակված ստուգարքով:

Քոլեջում (վերա)մշակվել և ներդրվել են գնահատման հետևյալ կանոնակարգերը՝ 2021թ.-ին «Ուսանողների գնահատման և միջանկյալ ամփոփիչ ատեստավորման» և «Ուսանողների ստացած գնահատականների վերահանձման», 2022թ.-ին «Քոլեջի ուսանողի գնահատման ուղեցույց», 2023թ.-ին «Ուսանողների բողոքների դիտարկման» և «Տեսական և գործնական պարապմունքներին կրթական վերջնարդյունքների գնահատումը՝ ըստ գնահատման չափանիշների ու չափորոշիչների (10 միավորային սանդղակով)»: Վերջինով փորձ է կատարվել սահմանել գնահատման չափանիշներ և չափորոշիչներ, որը ընդհանրական կարող է կիրառվել բոլոր մոդուլների համար, այդուհանդերձ այդ կարգը դեռևս տեղայնացված չէ ըստ ՄԿԾ-ների մոդուլների և ուսումնառության արդյունքների:

Քոլեջում գիտելիքների գնահատումս իրականացվում է ընթացիկ՝ ձևավորող գնահատման, ստուգարքների, քննությունների, պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացմամբ: Ընթացիկ գնահատումներն իրականացվում են դասախոսի կողմից դասի ընթացքում, գնահատման համար հիմք են հանդիսանում տեսական գիտելիքները, գործնական կարողությունները: Գնահատման համար տարբեր դասախոսներ կիրառում են տարատեսակ մեթոդներ՝ բանավոր հարցման, իրավիճակային խնդիրների լուծման, թեստային առաջադրանքների միջոցով, որոնք հիմնականում համապատասխանում են մոդուլների ակնկալվող արդյունքներին: Այդուհանդերձ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գնահատման կշիռները ներկայացված չեն հարցաշարերում, հարցատոմսերում, թեստային աշխատանքներում, իրավիճակային խնդիրներում:

Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցատոմսերում ներառված են և՛ տեսական գիտելիքները և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր, մասնավորապես՝ «Քույրական գործ» մասնագիտության ուսանողներին տրվում է 2 տեսական հարց և իրավիճակային խնդիր, «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտության ուսանողներին տրվում է 2 տեսական հարց և գործնական առաջադրանք՝ աշխատանք մոդելի հետ: Ատամնատեխնիկական գործ մասնագիտության մեջ տրվում է 3 տեսական հարց և ուսանողները որպես գործնական առաջադրանք ներկայացնում են իրենց ուսումնառության ընթացքում պատրաստած աշխատանքները:

Պետական քննական հանձնաժողովները արդյունքների վերաբերյալ ներկայացնում են հաշվետվություններ, որոնք հիմնականում միանման են՝ ներկայացված է քննության ընթացքը, եզրակացությունները, որոշ դեպքերում առաջարկություններ նշված չեն, որոշներում՝ խորհուրդ է տրվում զարգացնել իրավիճակային խնդիրներին այլընտրանքային լուծումներ տալու կարողությունը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ գնահատականի բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:

Փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ փորձնական քայլեր են նախաձեռնվում ուսումնառության և հետազոտության փոխկապակցման մեխանիզմների ներդրման նպատակով, դասախոսների կողմից առաջարկված հետազոտական թեմաների շուրջ ուսանողները ըստ ցանկության կարող են իրականացնել ռեֆերատներ և դասախոսների հետ համատեղ իրականացնում են հետազոտական աշխատանքներ: Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ որոշ աշխատանքներ պարունակում են ստեղծագործական բաղադրիչ, սակայն ռեֆերատների հիմնական մասը նկարագրական բնույթի աշխատանքներ են, որոշներում բացակայում են՝ վերլուծությունները, եզրահանգումները, օգտագործված գրականության ցանկը: Ռեֆերատները գնահատվում են ուսանողների բանավոր ներկայացման հիման վրա, որպես ընթացիկ գնահատում: ՌԵֆերատների կատարման մեխանիզմները հստակեցված չեն:

2022թ. քոլեջում ներդրվել է «Ակադեմիական ազնվություն և գրագողության կանխարգելման կանոնակարգ»-ը, կանոնակարգը փաստացի չի գործում, հստակեցված չի գործիքակազմը, որով դասախոսը կստուգի աշխատանքը:

Մասնագիտական կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծության իրականացման նպատակով քոլեջը 2022թ. մշակել է «Բենչմարքինգի քաղաքականության ընթացակարգ»: Համեմատվել են քոլեջի «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» և Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությունների կրթական ծրագրերը: «Քույրական գործ» կրթական ծրագրի բենչմարքինգ է իրականացվել ՀՀ 4 քոլեջների՝ Երևանի Հենակետային, Վարդենիսի, Գրիգորիս և Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջների միջև: Իրականացվել է նաև միջազգային փոխադարձ բենչմարքինգ Իսպանիա Էքստեմադույայի համալսարանի «Բուժքույրական խնամք» և քոլեջի «Քույրական գործ» մասնագիտական կրթական ծրագրերի: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ իրականացված համեմատական վերլուծությունների արդյունքում, քոլեջը վեր է հանել ակադեմիական շարժունությանը խոչընդոտող խնդիրները, ծրագրային տարբերությունները:

Քոլեջը 2024թ. մշակել և ներդրել է «Կրթական ծրագրերի իրականացման մոնիթորինգի և վերանայման կարգ»-ը, որում սահմանվում է կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացների նպատակները, խնդիրները: Քոլեջում իրականացվել է «Քույրական գործ», «Ատամատեխնիկական գործ», «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» ՄԿԾ-ների մոնիթորինգ՝ կազմվել է մոնիթորինգային հանձնաժողով: Ուսումնասիրվել են դասախոսների թղթապանակները, նյութատեխնիկական բազան, կատարվել են դասալսումներ: Մշտադիտարկման տվյալների հիման վրա կազմվել է բարելավման պլան, ըստ որի անհրաժեշտ է՝ հարստացնել նյութատեխնիկական բազան, իրականացնել հետազոտական աշխատանքներ, կազմակերպել սեմինարներ

դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման թեմաներով, սակայն հստակեցված չէ իրականացման ժամանակահատվածը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորելով ՄՈՒՀ-ի առաքելությանը համահունչ մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացումը, դրական է համարում, որ վերջին տարիներին քոլեջը հետևողական աշխատանքներ է իրականցրել ՈԱՇ բնութագրիչներին համապատասխան կրթություն իրականացնելու համար: Այս համատեքստում մշակվել են ՄԿԾ մասնագրերը՝ հիմք ընդունելով ՊԿՉ-ները, սահմանվել են ՄԿԾ-ների վերջնարդյունքները, հաշվի առնելով ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների ուսումնառության արդյունքները, այլ քոլեջների փորձի ուսումնասիրության արդյունքում վերանայվել են նաև ուսումնական պլանները: Դրական է նաև ընտրովի առարկաների ընդգրկումը ուսումնական պլաններում, այդուհանդերձ ուսանողի ընտրությունը մեկ մոդուլի շրջանակներում է: Այս տեսանկյունից ուսանողների կարիքների վեր հանումը և կամընտրական մոդուլների բազմազանեցումը կարող է նպաստել ուսանողների մասնագիտական գիտելիքների խորացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը որոշակիորեն փորձում է կանոնակարգել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը, որի համար մշակվել է համապատասխան կանոնակարգ, մյուս կողմից փորձ է կատարվել փոխկապակցել ուսումնառության ակնկալվող արդյունքները դասավանդման և ուսումնառության մեթոդների հետ: Սակայն վերոնշյալ քարտեզագրումները, որոնք փորձագիտական խմբին են ներկայացվել ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում, տեսանելի չեն ՄԿԾ-ների բոլոր մոդուլային ծրագրերում, ինչպես նաև չեն հանդիսանում ՄԿԾ նկարագրի մաս: Մոդուլների ուսումնառության արդյունքների փոխկապակցումը դասավանդման և ուսումնառության և գնահատման մեթոդների հետ կնպաստի ՄԿԾ վերջնարդյունքների լիարժեք փոխկապակցմանը մոդուլների արդյունքների հետ: Կարևոր է, որ քոլեջը տեղայնացնի դրական փորձը ներդնելով դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական մոտեցումներ, ինչը պետք է արտահայտվի նյութատեխնիկական բազայի և կիրառվող մեթոդների համահունչ փոխկապակցմամբ:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում ավանդական ուսուցմանը զուգահեռ կիրառվում են ինտերակտիվ ուսուցման մեթոդներ, համագործակցային ուսուցման մեթոդների առավել հաճախ կիրառումը կարող է նպաստել ուսանողների գործնական կարողությունների ձևավորմանը: Անհրաժեշտ է նշել, որ գործընկերային ռեսուրսների համատեղ կիրառությունը ուսանողների տեսական, գործնական պարապմունքների ինչպես նաև պրակտիկաների կազմակերպման համար, նպաստում են աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կարողությունների ձևավորմանը:

Այս համատեքստում փորձագիտական խումբը կարևորում է ըստ ՄԿԾ-ների հանձնարարականների միասնական բազայի ձևավորումը և հանձնարարականների մշակման ու տրամադրման հստակ պահանջների սահմանումը: Հաշվի առնելով, որ քոլեջը ձևավորում է հետազոտության և ուսումնառության փոխկապակցման մեխանիզմները,

անհրաժեշտ է հետազոտական աշխատանքների ներդրմանը զուգահեռ հստակեցնել վերջիններիս դերը վերջնարդյունքների ձեռքբերման մեջ, որպես մասնագիտական վերլուծական մտածողության ձևավորման անհրաժեշտ բաղադրիչ:

Ինչ վերաբերվում է քոլեջի կողմից մշակված գնահատման չափանիշներին, ապա փորձագիտական խումբը նշում է, որ դրանք տեղայնացված չեն ՄԿԾ-ի դասընթացների շրջանակներում, որը կարող է հանգեցնել չափանիշների թերի կիրառությանը: Տարբեր տարիների ընթացքում շարունակաբար նոր կանոնակարգերի մշակումը ցույց է տալիս, որ ոլորտը դեռևս լիարժեք համակարգված չէ, այդուհանդերձ անհրաժեշտ է, որ ՄՈՒՀ-ը գնահատի, թե որքանով են այդ կանոնակարգերը փոխլրացնում միմյանց և որքանով են արդյունավետ կիրառության մեջ: Յուրաքանչյուր ուսումնառության արդյունքի գնահատման ռուբրիկների /չափանիշների/ սահմանումը թույլ կտա ՄՈՒՀ-ին հաջողությամբ ներդնել այս ուղղությամբ մշակված կանոնակարգերը: Մոդուլների արդյունքների, ուսանողների տրվող հանձնարարականների և դրանց գնահատման միջև նկարագրելի և տեսանելի կապի ստեղծումը, կարող է ապահովել արդյունքների ձեռք բերման աստիճանի օբյեկտիվ գնահատումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի կողմից կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծությունների իրականացումը այդ թվում արտասահմանյան քոլեջի հետ, սակայն այդ փորձառությունը դեռևս չի տարածվել այլ կրթական ծրագրերի վրա և չի ներդրվել «Քույրական գործ» մասնագիտության կրթական ծրագրում: Բենչմարքինգի արդյունքների տեղայնացումը կարևոր է ՄԿԾ-ների շարունակական բարելավման համար, նպաստելով որակյալ մասնագետների պատրաստմանը:

Դրական հանգամանք է կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգի առկայությունը, որի համաձայն դեռևս բարելավումներ չեն իրականացվել, միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ մշտադիտարկման և գնահատման առկա մեխանիզմները դեռևս լիովին չեն նպաստում խնդիրների վեր հանմանը: Մշտադիտարկման մեխանիզմների բարելավումը և բազմազանեցումը կնպաստեն ՄԿԾ-ների իրականացման վերաբերյալ օբյեկտիվ տվյալների հավաքագրմանը և ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք գործարկմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ քոլեջում գործող մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են քոլեջի առաքելությանը և իրականացվում են պետական կրթական չափորոշիչների հիման վրա, որոշ դասախոսներ կիրառում են դասավանդման համագործակցային ուսուցման մեթոդներ, գործնական պարապմունքները կազմակերպվում են բժշկական հաստատություններում, կոսմետոլոգիական կենտրոններում, պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցատոմսերում ներառված են գործնական հմտությունները ստուգող հարցեր, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: Ուսանողների հավաքագրման նպատակով քոլեջը մշակել է ուսանողների հավաքագրման/մասնագիտական կողմնորոշման/, ընդունելության անցկացման քաղաքականություն և ընթացակարգեր: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում հիմնականում ներգրավված են տնօրենը, կարիերայի բաժինը, դասախոսները, ուսանողները և ծնողները: Ուսանողների հավաքագրման նպատակով իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ. կազմակերպվում են այցելություններ Երևանի և հարակից շրջանների մի շարք դպրոցներ: Այցելությունների ժամանակ քոլեջը դիմորդներին ծանոթացնում է իր գործունեությանը, տեսաֆիլմերով աշակերտներին ներկայացվում են քոլեջի մասնագիտությունները, պրակտիկաների ժամանակ կատարված աշխատանքները և այլն: Կազմակերպվում են նաև «Բաց դռների օրեր», որի ժամանակ աշակերտները ճանաչողական այցեր են կատարում քոլեջ: Ուսանողների հավաքագրման նպատակով 2017թ.-ից ակտիվ գործունեություն է ծավալում նաև քոլեջի ֆեյսբուքյան էջը, որտեղ տեղադրվում են վճարովի գովազդներ շահագրգիռ տարբեր տարիքային խմբերի համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գովազդը ապահովել է բարձր դիտելիություն, այդուհանդերձ ուսանողները ընտրում են քոլեջը հիմնականում շրջանավարտների խորհրդով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է գրանցվել: Հատկապես աճել է «Քույրական գործ» և «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտությունների գծով, ինչը, ըստ քոլեջի ներկայացուցիչների, պայմանավորված է նաև նրանով, որ աշխատաշուկան ունի մասնագետների մեծ պահանջարկ: Փորձագիտական այցի դրությամբ քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 310 ուսանող:

Քոլեջում դիմորդների համար կազմակերպվում են նաև նախապատրաստական դասընթացներ «Կենսաբանություն» առարկայից: Ըստ քոլեջի կողմից իրականացված հարցումների վերլուծությունների՝ 2024-2025 ուստարվա դիմորդների 95%-ը (18 դիմորդ) օգտվել է և բավարարված է ընդունելության նախապատրաստական դասընթացից: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ նախապատրաստական բաժնի համար առկա է նաև ժամանակացույց:

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են հանդիսացել բացակայությունները և ցածր առաջադիմությունը: Նախկինում հեռացվել են նաև ուսման վարձավճար չվճարելու պատճառով, սակայն, քոլեջը ներկայումս վարում է ուսման վարձերի վճարման ավելի ճկուն քաղաքականություն և այդ հիմքով այժմ քոլեջը հեռացումներ չի կատարում: Հեռացումների քանակը նվազեցնելու համար քոլեջում իրականացվում են հանդիպում-զրույցներ, լրացուցիչ

պարապմունքներ բացակայած ուսանողների հետ, ներդրվել է նաև բացակայությունների լրացման թերթ:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է ղեկավար անձնակազմի, Որակի ներքին ապահովման կառույցի, ՈւԽ-ի, դասղեկների և ծնողների միջոցով: Սակայն փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում կարիքների գնահատումը կարգավորող փաստաթուղթը «Ուսանողների հարցման կանոնակարգն», որտեղ պարզաբանվում է ուսանողների հարցման նպատակները և ուղղվածությունը, ուսանողների բավարարվածությունը քոլեջի ծառայություններից, ստորաբաժանումների և դասախոսական կազմի աշխատանքներից, ինչպես նաև հանդիպում-քննարկումները: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ տեսանելի է կապը վեր հանված կարիքների և նախատեսված բարելավման գործողությունների միջև: Վեր հանված խնդիրներին լուծումներ տալու ուղղությամբ քոլեջն իրականացնում է աշխատանքներ՝ նոր նյութերով համալրվել է նյութատեխնիկական բազան, ձեռք են բերվել նոր համակարգիչներ, մուլյաժներ և այլն:

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում կարևոր օղակ է նաև ՈւԽ-ն: Ուսանողները որևէ խնդրի առկայության դեպքում դիմում են ՈւԽ-ին, որն էլ իր լիազորությունների սահմաններում փորձում է խնդրին լուծում տալ, կամ դիմում է համապատասխան օղակներին: Օրինակ, քոլեջում ուսանողին չհեռացնելու հարցով ՈւԽ-ը միջնորդել է Կառավարման խորհրդին, որը դրական լուծում է ստացել. հեռացվող ուսանողին տրվել է պայմանական փորձաշրջան:

Քոլեջը 2023թ. մշակել է ուսանողներին տրվող խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների կազմակերպման կարգ, որով սահմանվել են շահառուները և դասընթացների կազմակերպման ձևերը: Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց: Քոլեջի կատարած հարցումների վերլուծություններից պարզ դարձավ, որ ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը՝ ընդգրկված են 47,6%-ը:

Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում իրականացվում են, սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, ըստ անհրաժեշտության դասախոսները ևս պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, պատասխանելու նրանց հարցերին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով: Քոլեջում առկա է նաև վարչական անձնակազմին դիմելու հստակ ժամանակացույց: Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարարվածությունը, ըստ որի ուսանողների 99.6%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 92.7%-ը բավարարված է այդ ծառայություններից: Ուսանողները վարչական անձնակազմին դիմում են հիմնականում կրթաթոշակներին և ուսման վարձի զեղչերին վերաբերող հարցերով: Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի բաժին:

Կարիերայի բաժինը պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ շրջանավարտների հետ, հետաքրքրվում նրանց զբաղվածությամբ, հավաքագրում շրջանավարտների վերաբերյալ տվյալներ, սակայն լիարժեք բազա դեռևս ձևավորված չէ: Այցելություններ է կազմակերպում Երևանի և մարզերի դպրոցներ՝ դիմորդների հավաքագրման նպատակով, որի ժամանակ ներգրավվում է նաև ուսանողներին: Կարիերայի բաժինը համագործակցում է մի շարք պետական և մասնավոր կազմակերպությունների հետ՝ շրջանավարտների կարիերային նպաստելու և նրանց աշխատանքի տեղավորելու նպատակով: Քոլեջը կնքել է շուրջ 32 հուշագրեր, պայմանագրեր և համաձայնագրեր հաստատությունների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ: Կարիերայի պատասխանատուն պարբերաբար թափուր աշխատատեղերի վերաբերյալ իրազեկում է շրջանավարտներին, այդ թվում նաև քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Կարիերայի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, սակայն այդ վերլուծություններում չեն ներկայացվել վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները, որոնք աշխատանքի են անցել կարիերայի պատասխանատուի օժանդակությամբ: Փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Քույրական գործ» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների շրջանավարտները:

Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով առանձին մոդուլների շրջանակներում հանձնարարվում են ռեֆերատներ: Հարկ է նշել, որ աշխատանքի թեմաները առաջարկում է դասախոսը և հաստատվում է ամբիոնի կողմից, (օրինակ անշարժ պրոթեզավորում մոդուլից՝ «Կամրջաձև պրոթեզ», քույրական գործը թերապիայում մոդուլից՝ «Թոքի քաղցկեղ», ձեռքերի և ոտքերի հարդարման իրականացում մոդուլից՝ «Օնիխոլիզիս»): Բացի ռեֆերատներից տրվում են նաև այլ ստեղծագործական/ վերլուծական բնույթի ինքնուրույն առաջադրանքներ՝ պաստառներ, հերբարիումներ, նկարչական հմտությունների զարգացում («Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»), սահիկաշար և այլն: Ուսանողներին քոլեջը ամբիոնների միջոցով ներգրավում է դասախոսների հետ համատեղ հետազոտական աշխատանքներում, օրինակ՝ «Բերանի խոռոչի հիգիենայի պահպանումը՝ 7-10 տարեկան երեխաների մոտ»:

ՈՒԽ-ն իրականացնում է իր աշխատանքների տարեկան պլանավորում նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուներին: 2024թ.-ին վերակազմավորված Ուսանողական խորհուրդն այլ ՈՒԽ- ների հետ համեմատության արդյունքում վերանայել է իր կազմում գործող հանձնաժողովները, ստեղծվել են նաև նոր հանձնաժողովներ՝ կազմակերպչական, սպորտային, մշակույթի, իրավական, արտաքին կապերի, կրթական և այլն: Այդուհանդերձ, ՈՒԽ-ի հանձնաժողովների աշխատանքները դեռևս լիարժեք պլանավորված չեն՝ առկա չեն առանձին հանձնաժողովների աշխատանքների կիսամյակային կամ տարեկան պլանավորում: Փորձագիտական այցից և ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ի ներկա և նախորդ նախագահների միջև համագործակցություն չի եղել, ինչպես նաև բացակայում է տեղեկացվածությունը նախորդ տարվա պլանների և հաշվետվությունների հետ կապված:

ՈւԽ-ը պարբերաբար իրականացվող նիստերը արձանագրում է, քննարկվում են ուսանողներին վերաբերող հարցեր, խնդիրներ, քննարկվում են նախատեսվող միջոցառումները և պլանավորում է կազմակերպել նոր քննարկումներ, սեմինարներ, միջոցառումներ, ընդլայնել համագործակցությունների շրջանակը և ուսանողներին հնարավորինս ակտիվորեն ներգրավվել ՈւԽ աշխատանքներում: Փորձագիտական ուսումնասիրություններից և այցից պարզ դարձավ, որ ՈւԽ նիստերն արձանագրվում են: Վերջին շրջանում ՈւԽ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել է շրջանավարտների ավարտական միջոցառում, կազմակերպվել են տոներին նվիրված միջոցառումներ, ինչպես նաև կազմակերպվել են բանավեճեր, քննարկումներ տարբեր թեմաներով: ՈւԽ-ն նաև համագործակցում է այլ ՄՈՒՀ-երի Ուսանողական խորհուրդների հետ՝ այդ ուսումնական հաստատություններում կազմակերպվող միջոցառումներին և սեմինար-քննարկումներին ուսանողների մասնակցությունը ապահովելու համար: Այդ նպատակներով 2023թ.-ի փետրվարին ՈւԽ-ն հուշագիր է կնքել Մանկավարժական համալսարանի ՈւԽ-ի հետ՝ կազմակերպվել են փոխադարձ այցելություններ: Ուսանողները մասնակցել են նաև կամավորական աշխատանքների, օրինակ՝ հիվանդանոցում որպես բուժքրոջ օգնական 2020թ.-ի պատերազմի ժամանակ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ նիստերի ընթացքում քննարկվել են նաև ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր: Նաև պարզ դարձավ, որ Ուսանողական խորհրդի աշխատանքների բավարար չափով չեն լուսաբանվում ուսանողների մեծամասնությունը ՈՒԽ աշխատանքների մասին տեղեկանում է դասախոսների միջոցով:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է հարցումների միջոցով: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վեր հանված խնդիրները հիմնականում վերաբերում են նյութատեխնիկական բազայի հագեցվածության անհրաժեշտությանը, նոր համագործակցությունների ավելացմանը, գրադարանի և նոր լսարանների ավելացմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման և ընդունելության մեխանիզմներ, որոնք նպաստել են ուսանողների թվի դինամիկ աճին: Հարկ է նշել որ քոլեջը կիրառում է բազմազան մեխանիզմներ՝ համագործակցում է հանրակրթական դպրոցների հետ, կազմակերպում է «Բաց դռների օրեր», կիրառում է ֆեյսբուքյան էջը, իրականացնում է վճարովի գովազդ, նախապատրաստական դասընթացներ դիմորդների համար «կենսաբանություն» առարկայից: Փորձագիտական խմբի հանդիպումներից ներքին և արտաքին շահակիցների հետ կարելի է նշել, որ վերոնշյալ միջոցառումներից առավել մեծ ազդեցություն ունի նախապատրաստական դասընթացների անցկացումը, ինչպես նաև այն որ քոլեջում սովորող ուսանողները խորհուրդ են տալիս ընտրել իրենց քոլեջը նպաստելով նոր ուսանողների ներգրավմանը: Դրական է, որ քոլեջը որոշակիորեն գնահատում է իր կողմից կիրառված որոշ մեխանիզմների արդյունավետությունը, օրինակ՝ որքանով են նախապատրաստական դասընթացները օգտակար եղել, սակայն խորքային ուսումնասիրություններ դեռևս չեն

իրականացվել: Հստակ չէ, թե ուսանողների ներգրավման որ մեխանիզմն է ավելի արդյունավետ տվյալ կրթական ծրագրի համար, այս տեսանկյունից փորձագիտական խումբը խրախուսում է մեխանիզմների արդյունավետության գնահատման աշխատանքների հետևողական իրականացումը, որը կնպաստի առանձին ՄԿԾ-ների համար առավել թիրախային աշխատանքների իրականացմանը: Չնայած քոլեջը որոշակիորեն հաջողել է դիմորդների հավաքագրման աշխատանքներում, այդուհանդերձ ներկա փուլում ընդունելության ցուցանիշների աճին, կամ նոր մասնագիտությունների ներդրմանը առավելապես խոչընդոտում է վարձակալվող տարածքի սահմանափակ հնարավորությունները, որը հրատապ լուծման ենթակա խնդիր պետք է դիտարկվի քոլեջի կողմից:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում որոշակիորեն կրթական կարիքների գնահատման ֆորմալ և ոչ ֆորմալ մեխանիզմներ, որոնք հիմք են հանդիսացել բարելավումների իրականացման համար: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում աստիճանաբար կրթական և այլ կարիքների վերհանման ոչ ֆորմալ մեխանիզմները փոխարինվում են առավել օբյեկտիվ գործիքակազմով՝ հարցումներ, ֆոկուս խմբային քննարկումներ, որը նպաստում է ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորմանը: Կրթական կարիքների վերհանման մեխանիզմների բազմազանեցումը կնպաստի օբյեկտիվ տվյալների հավաքագրմանը և տվյալահենք որոշումների կայացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ուսանողներին տրամադրվում են խորհրդատվական ծառայություններ, կազմակերպվել են նաև օտար լեզվի լրացուցիչ պարապմունքներ, այնուամենայնիվ, այս ուղղությամբ աշխատանքները բազմազանեցման և համակարգման կարիք ունեն: Փորձագիտական խումբը նաև գտնում է, որ լրացուցիչ և խորհրդատվական պարապմունքների արդյունավետության գնահատումը նախապայման է հանդիսանում, այս ուղղությամբ կարիքների վեր հանման և գործընթացների հետագա բարելավման համար: Ինչ վերաբերում է լեզվահմացության մակարդակի բարձրացմանը ապա կարևոր է լեզվահմացությունը փոխկապակցել ՄԿԾ-ների իրականացման հետ և ներդնել շարունակական ազդեցություն ապահովող մեխանիզմներ, լեզվահմացությունը խրախուսելով ուսանողների գործունեության տարբեր մակարդակներում: Քոլեջի կարիերայի պատասխանատուի գործունեությունը, որոշակիորեն նպաստում է ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, քոլեջը նաև կազմակերպում է հանդիպումներ շրջանավարտների հետ, հետաքրքրվում է նրանց զբաղվածությամբ, տրամադրում տվյալներ թափուր հաստիքների մասին: Այդուհանդերձ շրջանավարտների բազան ձևավորման փուլում է: Փորձագիտական խումբը ընդգծում է շրջանավարտների բազայի շարունակաբար տեղեկատվությամբ համալրման անհրաժեշտությունը՝ ինչպես օրինակ շրջանավարտների հետագիծը, թարմացված տեղեկատվությունը զբաղվածության վերաբերյալ, ինչը անշուշտ կնպաստի քոլեջ - շրջանավարտ - գործատու կապի ամրապնդմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի իրականացրած աշխատանքները ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար, թեև տարբեր առարկաների շրջանակներում դասախոսները նպաստում են ուսանողների վերլուծական և քննադատական մտածողության ձևավորմանը, ինչը կարևոր է հատկապես առողջապահական

ոլորտի մասնագետների համար, սակայն համակարգային մոտեցումները դեռևս ձևավորման փուլում են: ՄԿԾ-ներում ռեֆերատների, հետազոտական և վերլուծական առաջադրանքների տրամադրման և դրանց իրականացման մեխանիզմների հստակեցումը, միասնական մոտեցումների մշակումը և կիրառությունը կնպաստի ուսումնառության և հետազոտության փոխկապակցմանը ինստիտուցիոնալ մակարդակում, ապահովելով ուսանողների մոտ վերլուծական, քննադատական կարողությունների զարգացումը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի Ուսանողական խորհուրդ իրականացնում է կանոնակարգված գործունեություն, որը ձևավորում է ուսանողական միջավայր: Դրական է նաև, որ ՈՒԽ-ը ընկալում է իր դերակատարությունը և ակտիվորեն մասնակցում է ուսանողական միջոցառումների կազմակերպման աշխատանքներում, հանդես է գալիս նախաձեռնություններով: Իր աշխատանքները առավել համակարգված իրականացնելու համար ՈՒԽ-ը ստեղծել է ներքին հանձնաժողովներ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հանձնաժողովների աշխատանքները հստակ չեն պլանավորվում, գործում են ըստ իրավիճակի: Իրավիճակային մոտեցումները հանգեցնում են ուսանողների համակազմի և ՈՒԽ-ի միջև կապի թուլացմանը, ոչ բոլոր ուսանողներն են տեղյակ և հետաքրքրված ՈՒԽ գործունեությանը: ՈւԽ-ը թեև իր մասնակցությունը ունի նաև հետազոտական բնույթի միջոցառումների կազմակերպմանը սակայն հստակ չէ նաև ՈՒԳԸ գործունեությունը: ՈՒԽ համակարգված աշխատանքը, պլանավորման գործիքակազմի կիրառությունը և հաշվետվողականությունը կնպաստի ՈՒԽ աշխատանքների ակտիվացմանը և ներգրավված ուսանողների քանակի ավելացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա են ուսանողների հավաքագրման ու ընդունելության հստակ մեխանիզմներ, դիմորդների համար կազմակերպվում են նախապատրաստական դասընթացներ, ուսանողներին տրամադրվում է լրացուցիչ խորհրդատվական աջակցություն, կազմակերպվում են լրացուցիչ դասընթացներ, կարիերայի բաժինը տրամադրում է աջակցություն նախապատրաստելու ուսանողներին հետագա կարիերային, ՈւԽ-ն աջակցում է ուսանողների կարիքների վեր հանմանը, քոլեջում գործում են ուսանողներին տրամադրվող ծառայությունների, ստորաբաժանումների աշխատանքներից բավարարվածության գնահատման մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 4-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Պրոֆիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Քոլեջը 2020-2024թթ. ռազմավարական ծրագրում, որպես նպատակ սահմանել է՝ զարգացնել դասախոսական կազմի ներուժը, մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը և բարձրացնել աշխատողների բարեկեցության մակարդակը: Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է համաձայն՝ «Քոլեջի ներքին կարգապահական կանոններ»-ի, «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգ»-ի և «Դասախոսական կազմի աշխատանքի ընդունման, թափուր տեղերի մրցույթային կարգ»-ի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը մրցույթի կարգով աշխատակցի ընդունման փորձ դեռևս չունի, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը աշխատանքի է ընդունվել հարցազրույցով: Դասախոսական կազմի ընտրությունն իրականացնելիս քոլեջը հաշվի է առնում որակավորումը, աշխատանքային փորձը: 2023թ. քոլեջը մշակել է «Դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ ըստ մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների» փաստաթուղթը, որի ներքո քոլեջը ներկայացրել է ՊԿՉ-ով սահմանված միջին մասնագիտական որակավորում ունեցող շրջանավարտին ներկայացվող պահանջները, սակայն վերջիններս կարող են վերաբերել միայն միջին մասնագիտական կրթությամբ դասավանդողներին, չեն արտահայտում նեղ մասնագիտական և ոլորտային առանձնահատկությունները: Վերջին երկու տարիների ընթացքում դասախոսական կազմը համալրվել է գործատու ոլորտից հրավիրված դասավանդողներով: Քոլեջում դասավանդում է 38 դասախոս, որից 12-ը հիմական, 26-ը՝ համատեղող, դասախոսներից 11-ը՝ գործատուներ են, 28 դասախոս բարձրագույն կրթությամբ, իսկ 10-ը՝ միջին մասնագիտական: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ներկայումս համատեղությամբ աշխատում են նաև քոլեջի շրջանավարտները որպես դասախոս և վարչական աշխատակից՝ տնօրենի օգնական:

Դասախոսական կազմի մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսների մեծ մասը դասավանդում են մեկից ավելի (մինչև 5), մոդուլ/առարկա: Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջը ունի նեղ մասնագիտական որակավորմամբ մասնագետների կարիք՝ օրինակ ակնաբույժ, քիթ կոկորդ ականջաբան:

Դասախոսական կազմի գնահատման հիմական մեխանիզմներն են՝ դասալսումները, ինքնագնահատումը, ուսանողների շրջանում իրականացվող հարցումները: Դասալսումներն իրականացվում են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի, ամբիոնի վարիչի, դասախոսների կողմից, համաձայն «Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգ»-ի: Դասալսումների արդյունավետությունը գնահատելու համար մշակված են ձևաթերթեր, առկա են դասալսումների

արձանագրություններ: Դասալսման ընթացքում գնահատվում է՝ դասի կառուցվածքը, դասախոսի կողմից կիրառվող դասավանդման մեթոդները, վարվեցողությունը, պորտֆոլիոն և այլն: Դասալսումների արդյունքները, դիտողությունները, առաջարկությունները և եզրակացությունները քննարկվում են դասախոսների հետ, տրվում են համապատասխան հանձնարարականներ:

Դասախոսական կազմի աշխատանքների գնահատում իրականցվում է նաև որակի պատասխանատուի կողմից, ուսանողների շրջանում իրականացվող հարցումների միջոցով: Հարցումների վերլուծության համաձայն ուսանողները ընդհանուր առմամբ գոհ են դասավանդումից:

Քոլեջը մշակել է նաև դասախոսների ինքնագնահատման թերթիկներ, որոնց արդյունքները ներառվում են «Դասախոսների աշխատանքային գործունեության գնահատման գործիքակազմ և չափանիշներ» ձևաթերթում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ձևաթերթը մշակվել է ուսումնական գծով փոխտնօրենի կողմից, որտեղ 10 միավորային սանդղակով գնահատվում է ընդհանուր առմամբ 12 չափանիշներով՝ ներքին կարգուկանոնը, մատենավարությունը, դասալսումների վերլուծությունները, փոխադարձ դասալսումները, հետազոտական և մեթոդական աշխատանքները, արտալսարանային աշխատանքները, վերապատրաստումները, ՈՆԱԿ հարցումների արդյունքները և այլն: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ վերոնշյալ ձևաթերթի համաձայն 2023-2024 ուստարում իրականացրել է դասավանդողների վարկանիշավորում և ամենաբարձր միավորներ ստացած դասախոսը խրախուսվել է դրամական պարգևով: Հարկ է նշել, որ գնահատման այս գործիքակազմը (վարկանիշային գնահատման) դեռևս ներդրման փուլում է, քանի որ նրա առանձին բաղադրիչների վերաբերյալ ՊԴ կազմի իրազեկվածության աստիճանը տարբեր է, օրինակ ոչ բոլորն էին տեղյակ ինքնագնահատման ձևաթերթից:

Քոլեջում կարևորվում է սկսնակ դասախոսների հետ տարվող աշխատանքը, գործում է «Սկսնակ դասախոսների դպրոց», որտեղ ուսումնական գծով փոխտնօրենի կողմից սկսնակ դասախոսներին տրվում է խորհրդատվություն, մեթոդական օգնություն: Դասախոսները մասնակցել են քոլեջում կազմակերպված դասավանդման ինտերակտիվ մեթոդներին նվիրված դասընթացին, ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված մեթոդական վերապատրաստումներին, որը նախաձեռնվել է քոլեջի կողմից:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմի կայունությունն ապահովելու նպատակով քոլեջը բարձրացրել է աշխատավարձի չափը ըստ պարապմունքների ձևերի: Քոլեջը մշակել և ներդրել է «Տնօրենի և մանկավարժների պարգևատրման և նյութական խրախուսման», «Քոլեջի պատվավոր կոչումների շնորհման», «Դասախոսին՝ հավելավճար, հավելում և լրացուցիչ աշխատավարձ տալու» կարգերը, որոնց համաձայն դասախոսները խրախուսվել են «Պատվավոր դասախոս» կոչումով, շնորհակալագրերով:

Քոլեջի վարչական աշխատակիցներն են՝ տնօրենը, տնօրենի օգնականը, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, որակի պատասխանատուն, կարիերայի և պրակտիկայի պատասխանատուն, հասարակական կապերի և գովազդի պատասխանատուն, միջազգայնացման և արտաքին կապերի պատասխանատուն, հաշվապահը: Ընդհանուր

առմամբ քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը բավարարում է ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի իրականացմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի կողմից դասախոսական ներուժի զարգացումը նպատակների թիրախում է: Գովելի է ՄՈՒՀ-ի կողմից որակյալ կադրերի, պրակտիկ դասավանդողների ներգրավման ջանքերը, ինչը նպաստում է գործնական հմտություններով և կարողություններով օժտված մասնագետների պատրաստմանը և քոլեջ-գործատու կապի ամրապնդմանը: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի ձգտումը՝ հավաքագրել մրցույթային կարգին համապատասխան դասախոսական կազմ, այդուհանդերձ գործնականում մրցույթներ տեղի չեն ունենում: Որակյալ մասնագետների ներգրավման ուղղությամբ նպատակային աշխատանքների իրականացումը կարող է նպաստել նաև դասախոսական կազմի համալրմանը նեղ մասնագետներով՝ հատկապես հատուկ մասնագիտական մոդուլների դասավանդման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ աշխատանքի ընդունելիս քոլեջը հաշվի է առնվում դասախոսի որակավորումը, աշխատանքային փորձը: Դրական է նաև, որ դասախոսական կազմի ընտրությունը տեղի է ունենում ՊԿՉ պահանջներին համաձայն, միևնույն ժամանակ քոլեջը փորձ է կատարել սահմանել դասախոսական կազմի ընտրության պահանջները, սակայն վերոնշյալը որպես փաստաթուղթ վերարտադրում է ՊԿՉ պահանջները ուղղված միջին մասնագիտական որակավորմամբ շրջանավարտին: Փորձագիտական խումբը համարում է, որ քոլեջի մշակած փաստաթուղթը լիովին չի ապահովում մասնագիտական կրթական ծրագրերի համար անհրաժեշտ մասնագետներին ներկայացվող պահանջները, այն կարող է կիրառելի լինել միայն միջին մասնագիտական որակավորմամբ դասավանդողների համար, սակայն բազմաթիվ նեղ մասնագիտական մոդուլների դասավանդման համար քոլեջը ներգրավում է բարձրագույն կրթությամբ պրակտիկ բժիշկների: Այս տեսանկյունից փաստաթուղթը կիրառելի չէ և վերանայման կարիք ունի: Փորձագիտական խումբը ընդգծում է առավել հստակ պահանջների սահմանման անհրաժեշտությունը, որը թույլ կտա ներգրավել տվյալ մասնագիտության կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ մասնագետներ: Պահանջների սահմանումը կնպաստի դասախոսների հավաքագրման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Ընդհանուր առմամբ դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների զարգացումը գտնվում է քոլեջի ուշադրության կենտրոնում, որն արտահայտվում է դասախոսական կազմի մասնակցությամբ մանկավարժական վերապատրաստումներին: Թեև պարբերաբար առկա են մանկավարժական վերապատրաստումներ, այդուհանդերձ մասնագիտական վերապատրաստումները հիմնականում դասախոսները անցնում են անհատական նախաձեռնությամբ: Հարկ է նշել, որ մեթոդական աշխատանքների կատարման, պարբերաբար իրականացվող դասալսումներով և դասալսումների արդյունքում դասախոսին տրվող հետադարձ կապով, քոլեջը երկուստեք նպաստում է դասախոսական կազմի դասավանդման հմտությունների զարգացմանը և ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ դասալսումները իրականացվում են տարբեր օղակների ամբիոնի վարիչների, գործընկերների,

մեթոդիստի և փոխտնօրենի կողմից, որը մի կողմից ապահովում է բազմակարծություն, մյուս կողմից՝ փորձագիտական խումբը անհրաժեշտ է համարում վերջիններիս համակարգումը և միասնական մոտեցումների մշակումը հաշվի առնելով, որ իրականացվող դասալսումների արդյունքները նաև հիմք են հանդիսանում դասախոսական կազմի գնահատման համար:

Դրական է նաև, որ քոլեջում առկա են դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմներ, ինչը նպաստում է անձնակազմի մոտիվացիայի բարձրացմանը: Կարևոր է, որ քոլեջում արդեն իսկ փոխտնօրենի կողմից մշակված՝ «Դասախոսների աշխատանքային գործունեության գնահատման գործիքակազմ և չափանիշներ» ձևաթերթի հիման վրա իրականացվել է դասախոսների «վարկանիշային գնահատում», որի արդյունքները հիմք են հանդիսացել լավագույն դասախոսի ընտրության և խրախուսման համար: Այդուհանդերձ փորձագիտական խումբը մտահոգված է, թե որքանով են գնահատման բաղադրիչները օբյեկտիվ հավասար պայմաններ ստեղծում բոլոր դասավանդողների համար, ինչպես նաև նշում, որ անհրաժեշտ է խուսափել սուբյեկտիվ գնահատման մեխանիզմների ներառումը ինչպես օրինակ դասախոսի ինքնագնահատումը: Փորձագիտական խումբը ընդգծում է, որ դեռևս հստակ չէ թե ինչպես են օրինակ՝ դասալսման արդյունքները որպես միավորներ արտահայտվում վարկանիշային գնահատման թերթիկում: Միավորային գնահատականների ձևավորման մեխանիզմների հստակեցումը կարող է ապահովել գործընթացների օբյեկտիվությունը և թափանցիկությունը ներքին և արտաքին շահակիցների համար: Անհրաժեշտ է նաև, որ քոլեջը դիտարկի վարկանիշային գնահատման ձևաթերթում ընդգրկված բաղադրիչներից յուրաքանչյուրի հուսալիությունը և արդյունավետությունը որպես առանձին գնահատման գործիքակազմ, օրինակ այդ բաղադրիչներից մեկը՝ ՈՆԱԿ հարցումները:

Դասախոսական կազմի աշխատանքների արդյունավետության գնահատման գործիքակազմը, գնահատման մեխանիզմների լիարժեք կիրառումը հիմք կհանդիսանան դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակների շարունակական զարգացման համար:

Դրական է, որ քոլեջը իրականացնում է սկսնակ դասախոսների աջակցություն, փորձագիտական խումբը կարևորում է այդ աշխատանքների շարունակական իրականացումը, այդ աշխատանքներում ներգրավելով նաև փորձառու դասավանդողներին և պրակտիկ ոլորտից հրավիրված դասավանդողներին:

Ինչ վերաբերում է ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ կազմի առկայությանը, հարկ է նշել որ քոլեջը համալրել է իր կազմը անհրաժեշտ մասնագետներով, ստեղծելով համապատասխան հաստիքներ, մյուս կողմից փորձագիտական խումբը կարևորում է պաշտոնեական գործառույթների հստակեցման անհրաժեշտությունը, խուսափելով գործառույթների կրկնություններից և պաշտոնեական գերբեռնվածությունից, որը կնպաստի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը կարևորում է դասախոսական կազմի ներուժի զարգացումը, կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, իրականացնում է սկսնակ դասավանդողների

աջակցություն, ունի համեմատաբար կայուն դասախոսական կազմ, վարելով կադրերի երիտասարդացման քաղաքականություն, ներդրվել է դասախոսների գնահատման և խրախուսման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Քոլեջը 2020-2024թ. ՌԾ-ում որպես ռազմավարական ուղղություն սահմանել է արդիական հետազոտությունը և նորարարությունը: Հետազոտություն և նորարարություն ռազմավարական ուղղությամբ սահմանված են հետևյալ նպատակները՝ ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը, հետազոտական աշխատանքների իրականացմանը: 2020-2024թ ՌԾ-ում սահմանված են նաև հետազոտական աշխատանքների իրականացման խնդիրներն ու առաջընթացի գնահատման ցուցիչները:

Հարկ է նշել, որ քոլեջը դեռևս չունի հետազոտական գործունեության իրականացման սահմանված հստակ քաղաքականություն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի կողմից մշակվել է քոլեջի 2023-2024թթ. հետազոտական գործունեության ռազմավարություն և պլան-ժամանակացույց: Փաստաթղթում ներառված են տարվա ընթացքում իրականացվելիք միջոցառումները՝ կլոր սեղան քննարկումներ, սեմինարներ, ամբիոնների կողմից պլանավորված հետազոտական աշխատանքները և այլն: Պլանավորման աշխատանքներում ներգրավված է նաև ուսումնական գծով փոխտնօրենը, փաստացի հետազոտական գործունեության կառավարումը հստակեցված չէ թե, որ օղակների և ստորաբաժանումների կողմից է իրականացվում:

ՄՈՒՀ-ում հետազոտական աշխատանքը դեռևս չի հանդիսանում բոլոր կրթական ծրագրերի և մոդուլների բաղկացուցիչ մաս, սակայն այս ուղղությամբ կատարվել են որոշակի քայլեր: 2022թ. քոլեջը մշակել և ներդրել է «Կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացում հետազոտական աշխատանքի կատարման կարգը», որտեղ տրվում է հետազոտական աշխատանքի նկարագրությունը, աշխատանքի գնահատումը՝ չափանիշները և կատարման ժամանակացույցը: Նաև մշակվել է «Հետազոտական բաղադրիչ» լրացուցիչ առարկայի ծրագիրը (12 ժամ), որը 2023-2024 ուստարում փորձնական անցկացվել է քոլեջի I, II, III կուրսերում, նպատակ ունենալով ուսանողների մոտ պատկերացումներ ձևավորել հետազոտական աշխատանքների կատարման վերաբերյալ: Փորձագիտական

այցից պարզ դարձավ, որ առարկան նախատեսվում է հետագայում ներառել ուսումնական պլաններում։

Փորձագիտական հանդիպումները և այցի ընթացքում տեղի ունեցած մասնագիտական քննարկումները ցույց տվեցին, որ չնայած հետազոտական բաղադրիչը լիովին ներդրված չէ ստեղծագործական գործունեության հիմքում, այդուհանդերձ քոլեջի կողմից կարևորվում է ուսանողների մոտ հետազոտական-վերլուծական կարողությունների և քննադատական մտածելակերպի ձևավորումը (կլինիկական մտածողությունը), որպես մասնագիտական գործունեության բաղկացուցիչ մաս։ Այս տեսանկյունից ուսանողներին տրվող որոշ հանձնարարականները պարունակում են իրավիճակային խնդիրներ, հետազոտական տարրեր, իրավիճակների մոդելավորում, պրակտիկ դեպքերի վերլուծություններ և այլն։

Որպես ուսանողներին և դասախոսներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու մեխանիզմ՝ դասախոսներին հանձնարարվում է կիսամյակի ընթացքում կատարել հետազոտական աշխատանք՝ ներգրավվելով ուսանողներին, յուրաքանչյուր ամբիոն պետք է կիսամյակի ընթացքում ներկայացնի առնվազն մեկ հետազոտական աշխատանք։ 2022թ. քոլեջում հետազոտական աշխատանքներ կատարելու համար (ուսանողների հետ) 5 դասախոս արժանացել է պատվոգրերի, իսկ հետազոտական աշխատանքներն իրականացնող ուսանողները պարգևատրվել են շնորհակալագրերով։

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ տարբեր առարկաների և մոդուլների դասավանդման շրջանակներում դասավանդողներն իրենց նախաձեռնությամբ հանձնարարում են որոշ խմբային կամ՝ անհատական հետազոտություններ, ռեֆերատներ, սակայն դրանք հիմնականում իրականացվում են կամավորության սկզբունքով։ Նաև պարզ դարձավ, որ դասախոսներն աջակցում են ուսանողներին, թե ռեֆերատների, թե հետազոտական աշխատանքներ կատարելիս։

2023-2024 ուստարում ակտիվացել են նաև ՈՒԳԸ-ն աշխատանքները։ ՈՆԱԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է «Ուսանողական գարուն» միջոցառումը, որին մասնակցել են նաև Երևանի Հենակետային բժշկական քոլեջի ուսանողները, ներկայացվել են հետևյալ հետազոտական աշխատանքներ՝ «Անանուխ դեղաբույսի օգտակարության վերլուծությունը», «Սրտի բնածին արատները մանկահասակ երեխաների մոտ», «ՀՀ զբոսաշրջության ոլորտում պետական ներդրումային քաղաքականություն», «Դեռահասների շրջանում ավելորդ քաշի և ճարպակալման ռիսկային ուսումնասիրում», և «Ընդհանուր հոգեբանություն» առարկայից «Կոնֆլիկտների իրավիճակային կառավարում», «Հուզումներ», «Հոգեբանական բնութագրեր» և այլ տարբեր թեմաներով։ 2024թ. քոլեջի ՈՒԳԸ «Քույրական գործ» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունների I, II կուրսի ուսանողների համար կազմակերպել է գիտագործնական սեմինար՝ «Սթրեսի կառավարումը» թեմայով։ ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպել է նաև բանավեճ-քննարկում «Դեռահասի իրավունքները և հոգեբանությունը» թեմայով։

Թեև քոլեջում սահմանված է հետազոտական աշխատանքների կատարման ցուցումներ և պահանջներ, սակայն ուսանողների հետազոտական բնույթի աշխատանքներում, մեծամասամբ առկա չեն ուսանողի ինքնուրույն վերլուծությունները, եզրակացությունները և աղբյուրների հիշատակումները։

Մյուս կողմից ուսանողների հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը դեռևս հատվածային է, սահմանված չեն ուսանողների և դասախոսների հետազոտական աշխատանքներում ներգրավման մեխանիզմները, բացի այդ հետազոտական աշխատանքների ուղղությունները տարանջատված չեն ըստ ամբիոնների և մասնագիտությունների:
Հարկ է նշել, որ հետազոտության և ուսումնառության փոխկապակցումը որպես ինստիտուցիոնալ գործընթաց ձևավորման փուլում է, դեռևս հնարավոր չէ գնահատել ներդրված մեխանիզմների արդյունավետությունը:

Քոլեջը հետազոտական հետաքրքրությունները խթանելու և զարգացնելու համար հատկացնում է ֆինանսական միջոցներ՝ օգնելով դասախոսներին հոդվածների հրատարակման հարցում: Վերջին տարիներին հրատարակված հոդվածներն ունեն քոլեջի համար ոչ մասնագիտական բնույթ, հանդիսանալով առանձին դասախոսների մասնագիտական հետաքրքրությունների շրջանակներում աշխատանքներ՝ տնտեսագիտություն, մաթեմատիկա և այլ բնագավառներ: Տպագրված հոդվածները և ուսանողների հետ իրականացված հետազոտական աշխատանքները որպես միավորներ հաշվառվում են նաև դասավանդողների վարկանիշավորման ցուցանիշներում:

Դասախոսներին հանձնարարվում է նաև կատարել մեթոդական մշակումներ, իրենց դասավանդած մոդուլի շրջանակներում: Մեթոդական մշակումները հիմնականում վերաբերում են ինտերակտիվ դասավանդման մեթոդների ներդրմանը այս կամ այն մոդուլի դասավանդման ընթացքում, տեսանելի չեն մասնագիտական մեթոդական մշակումներ:
Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսների կողմից վերջին հինգ տարիների ընթացքում մեթոդական աշխատանքներ կամ ձեռնարկներ՝ կապված հետազոտական բաղադրիչի և ուսումնառության փոխկապակցման վերաբերյալ չեն իրականացվել: Դասախոսներից միայն մեկի կողմից, մասնագիտական գործունեության արդյունքում 2017թ.-ին է հրատարակվել, «Լաբորատոր ախտորոշում» ուսումնական ձեռնարկը (Երևան 2017, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն)*:* Կարելի է նշել, որ Կորոնավիրուսի համավարակի ժամանակ ուսանողների «Covid 19»-ի վերաբերյալ հետազոտական աշխատանք է իրականացվել, որի արդյունքները ներդրվել են «Քույրական գործը վարակիչ հիվանդությունների ժամանակ» մոդուլի մեջ: Սակայն այս օրինակը եզակի է:

Դասախոսական կազմից առանձին դասախոսներ, մասնագիտական ոլորտում միջազգային փորձն ուսումնասիրելու նպատակով, մասնակցել են միջազգային վերապատրաստումների՝ օնլայն ձևաչափով: Դասախոսների և ուսանողների կողմից հրապարակվել են հոդվածներ միջազգային ամսագրերում՝ և վերջինները հրատարակվել են մինչև 2024 թվականը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականությունն ու ընթացակարգերը և առհասարակ ողջ գործիքակազմը դեռևս ներդրման փուլում է:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջը հետազոտական գործունեությունը ներառել է իր ռազմավարական պլանում, որպես ռազմավարական ուղղություն և նպատակ, սահմանելով համապատասխան խնդիրներ, այդուհանդերձ իրականացվող քայլերը դեռևս չեն նպաստել ինստիտուցիոնալ

մեխանիզմների ներդրմանը: Խնդրի դիտարկումը հետազոտության և ուսումնառության փոխկապակցման տեսանկյունից ցույց է տալիս, որ այն շարունակում է լինել չկանոնակարգված, մյուս կողմից փաստացի հետազոտական գործունեության կառավարումը հստակեցված չէ թե, որ օղակների և ստորաբաժանումների կողմից է իրականացվում: Հետազոտական ուղղվածությամբ աշխատանքների պլանավորողները և այդ աշխատանքներն իրագործողները իրենց գործառույթներով տարբեր օղակներ են (ՈՆԱԿ, ամբիոն, փոխտնօրեն), թեև աշխատանքներում ներգրավված է նաև ուսումական գծով փոխտնօրենը, սակայն վերջինիս գործառույթները այս բնագավառում հստակեցված չեն: Փորձագիտական խումբն անհրաժեշտ է համարում հստակ պատասխանատուների և ներգրավված օղակների պատասխանատվությունների շրջանակների սահմանումը, հաշվի առնելով ՄՈՒՀ-ի այս ուղղությամբ ոլորտային հավակնությունները և սահմանված ռազմավարական նպատակները:

Փորձագիտական կողմը կարևոր է համարում, որ քոլեջը մշակել է «Կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացում հետազոտական աշխատանքի կատարման կարգը», որտեղ տրված են հետազոտական աշխատանքի նկարագրությունը, կատարման չափանիշները, սակայն կարգը լիովին ներդրված չէ, առկա չեն նաև կարգի իրականացումն ապահովող մեխանիզմները, մասնավորապես հետազոտական աշխատանքը՝ որպես ուսանողին տրվող հանձնարարական, դեռևս չի հանդիսանում կրթական ծրագրերի և մոդուլների բաղկացուցիչ մաս, ինչը ըստ էության հետազոտությունը, որպես ուսումնառողի կրթական գործունեության ձև՝ դառնում է ինքնանպատակ: Մյուս կողմից ուսանողների կողմից կատարված սակավաթիվ հետազոտական բնույթի և ինքնուրույն աշխատանքներում պահպանված չեն կարգով սահմանված չափանիշներն ու տեխնիկական պահանջները՝ բացակայում է գրականության ցանկը, եզրակացությունների նկատմամբ սահմանված չափանիշները:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի կողմից հետազոտական գործունեության իրականացման համար սահմանված հստակ քաղաքականության, ընթացակարգերի մշակումը, որը հնարավորություն կտա համակարգային լուծումներ առաջադրել կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի մեխանիզմների և վերջնարդյունքահենք գնահատման մեթոդների ներդրման համար: Մշակվել է քոլեջի 2023-2024թթ. հետազոտական գործունեության ռազմավարությունը և պլան-ժամանակացույցը: Սակայն մշակված ռազմավարությունն իր բովանդակությամբ նման է միջոցառումների պլանի և փորձագիտական խմբի գնահատմամբ կիրառելի չէ քոլեջի համար:

ՄՈՒՀ-ը բացի հետազոտության և ուսումնառության փոխկապակցումից նաև ձգտում է խթանել դասավանդողների հետազոտական կարողությունները՝ նպատակ ունենալով նպաստել քոլեջի հետազոտական և մեթոդական գործունեությանը: Դասավանդողների կողմից տպագրված աշխատանքները ոչ միշտ են համապատասխանում ՄՈՒՀ-ի ոլորտային ուղղվածությանը, մյուս կողմից այդ աշխատանքները հաճախ համահեղինակությամբ են տպագրվում այլ բուհերի դասավանդողների հետ: Դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականության ու ընթացակարգերի մշակումը և ներդնումը կնպաստեն ոլորտային ուղղորդված աշխատանքների իրականացմանը և քոլեջի հետազոտական ներուժի լիարժեք բացահայտմանը:

Կարևորվել է նաև ուսանողների ներգրավումը դասավանդողների հետ համատեղ հետազոտական գործունեության մեջ, տրվել է աջակցություն հոդվածների զեկուցման և տպագրության համար: Փորձագիտական խումբը դրական է համարում նաև ՈՒԳԸ-ի աշխատանքների ակտիվացումը, որը հարթակ է ստեղծում ուսանողների դրսևորման համար՝ սեմինարներ, ուսումնասիրությունների արդյունքների ներկայացում, քննարկում, սակայն ներկայումս այդ աշխատանքները լիովին փոխկապված չեն կրթական գործընթացի հետ և էական արդյունքներ չեն ապահովում: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում ուսանողների հատվածային ներգրավվածությունը հետազոտական բնույթի աշխատանքներում: Հետազոտական ուղղությունների տարանջատումը ըստ մասնագիտությունների /ամբիոնների/, ուսանողների ներգրավման մեխանիզմների հստակեցումը կնպաստեն ինստիտուցիոնալ գործընթացների կայացմանը ՄՈՒՀ-ում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հետազոտության և ուսումնառության գործընթացների փոխկապակցությունը ձևավորման փուլում է, կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչը լիարժեք ինտեգրված չէ, և դասախոսական կազմի հետազոտական աշխատանքների խթանման համար հստակ մեխանիզմներ չեն գործում, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում 6-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: Քոլեջը 2020-2024թթ. ՌԾ-ում խնդիր է դրել ունենալ ժամանակակից պահանջներին բավարարող ենթակառուցվածքներ՝ վերանորոգել և վերազինել լսարանները, հարստացնել նյութատեխնիկական բազան: Քոլեջն իր գործունեության իրականացման համար հիմնադրման օրվանից վարձակալում է տարածք Խ. Աբովյանի անվան թիվ 2 հանրակրթական դպրոցի մասնաշենքում, մինչև 2023թ. վարձակալության պայմանագիրը կնքվել է յուրաքանչյուր տարի, մեկ տարի ժամկետով, իսկ 2023թ.-ից երեք տարի ժամկետով: Հաշվի առնելով վարձակալած տարածքի փոքր լինելը, դասերը կազմակերպվում են երկհերթ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կառավարման խորհրդում քննարկվել է այլ տարածք վարձակալելու խնդիրը (ավելի մեծ, կամ երկրորդ մասնաշենք), քանի որ քոլեջի որոշ մասնագիտությունների կրթական ծրագրերի նկատմամբ աճել է դիմորդների հետաքրքրությունը, սակայն տարածքի սահմանափակ լինելը հնարավորություն չի տալիս դիմելու սահմանային տեղերի ավելացման համար:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար նախատեսված են լսարաններ և թվով 4 կաբինետներ՝ անատոմիայի, դեղաբանության, կոսմետոլոգիայի և դիմահարդարման, ատամնատեխնիկական: Քոլեջում առկա է 4 համակարգիչ, տպող սարք, որոնք օգտագործվում են վարչական աշխատանքների կազմակերպման համար, առկա չէ համակարգչային լսարան, դյուրակիր համակարգիչները տրամադրվում է ուսանողներին և դասավանդողներին դասի անցկացման համար: Բոլոր մասնագիտությունների համար առկա են պաստառներ, Ատամնատեխնիկական գործ մասնագիտության համար առկա են ատամների մուլյաժներ, նյութեր: Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ մասնագիտության համար առկա է պարկաթոռ, մազահեռացման սարք, կոսմետոլոգիական կոմբայն, գլուխներ, նյութեր: Քույրական գործ մասնագիտության համար առկա են անատոմիական մուլյաժներ, որոնք ունեն թարմացման և հարստացման կարիք:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջում բացակայում են ՊԿՉ-ներով պահանջվող մի շարք կաբինետներ օրինակ՝ վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի, քույրական գործի, մանրէաբանության և այլն, ինչպես նաև քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը օգտագործում է դպրոցի քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաները, իսկ կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ կաբինետների բացը լրացնում է գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով: Ըստ այդմ տեսական, գործնական պարապմունքների մի մասը և պրակտիկաներն իրականացվում են՝ «Արմենիա» ԲԿ, «Գրիգոր Նարեկացի» ԲԿ, «Հայկական կարմիր խաչ» ընկերություն, «Բելլա դենտ ատամնաբուժարան», «Ռուդլիթ» ատամնատեխնիկական լաբորատորիա, «Օլեգ» ատամնատեխնիկական ձուլարան, «Իդեն» էսթետիկ բժշկության կենտրոն, «Տոմաբայ» գեղեցկության սրահ, Հ .Պարոնյանի անվան թատրոն, «Արփիմեդ» դեղագործական ընկերությունյ, «ԱԿԳ ավելին քան դեղատուն», «Ալֆա ֆարմ» ընկերություն, «Գլոբալ սիստեմ ֆարմ» ընկերություն, «Բիո-քիմ» ընկերություն, որտեղ ուսանողները հնարավորություն ունեն օգտվելու գործընկերների ռեսուրսներից: «Արմենիա» ԲԿ-ում և «Գրիգոր Նարեկացի» ԲԿ-ում, քոլեջը վարձակալում է նաև լսարաններ: Քոլեջը չունի գրադարան, ուսանողների տրվող ուսումնական նյութերը մշակվում են դասավանդողների կողմից, հանրակրթական առարկաների դասագրքերի համար քոլեջը համագործակցում է դպրոցի գրադարանի հետ, մասնագիտական գրականությունը տրամադրում են դասավանդողները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողական խորհուրդը աջակցում և ուղղորդում է ուսանողներին անհրաժեշտության դեպքում օգտվելու նաև ազգային գրադարանից: Քոլեջը նախատեսում է 2025թ. անդամակցել մասնագիտական էլեկտրոնային գրադարանի: Նաև պարզ դարձավ, որ կայքեջում նախատեսվում է տեղադրել ուսանողներին անհրաժեշտ ուսումնական նյութերը, որը հնարավոր կլինի կայքեջի լիարժեք գործարկումից հետո:

Քոլեջն ունի մեկ շարժական պրոյեկտոր: Վերջին տարիների քոլեջը իրականացրել է որոշ ռեսուրսների բարեկարգում, ձեռք է բերվել 3 համակարգիչ/ նոթբուք, պրոյեկտոր, մանրադիտակ էլեկտրական էկրանով, իրականացվել կոսմետոլոգիական կաբինետի համալրում կոսմետոլոգիական կոմբայն սարքով, ատամնատեխնիկական լաբորատորիայի համալրում սարքավորումներով: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ քոլեջն իրականացրել է իր կողմից վարձակալված լսարանային ֆոնդի

վերանորոգումներ, ձեռք է բերել ուսումնական գույք (սեղան, աթոռ) իրականացվել են որոշ բարելավումներ։ Քոլեջը ապահովում է անհրաժեշտ նյութերով ուսանողներին և դասավանդողներին՝ մասնավորապես «Ատամնատեխնիկական գործ» և «Կոսմետոլոգիա և դիմահարդարման արվեստ» մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառողների և դասավանդողների համար։ Նախատեսված է մանիպուլյացիաների համար մուլյաժների և այլ ուսումնադիտողական պարագաների ձեռք բերում 2024-2025 ուստարում։ Քոլեջում առկա է համացանց, սակայն Wi-Fi ծածկույթի հզորությունը սահմանափակ է։

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2023-2024թթ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 68 %-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին։ Ըստ 2020-2024թթ. ՌԾ-ի՝ ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների բյուջեի բաշխման տվյալների՝ քոլեջը դրամական հատկացումներ է կատարել իր կողմից նախանշված գրեթե բոլոր ուղղություններով։ Ըստ 2023-2024 ուստարվա տվյալների քոլեջը հատկացրել է՝ ուսումնական բազաների վարձակալական ծախսեր՝ 5.3% գույք, սարքավորումների ձեռքբերում՝ 1%, վերանորոգում՝ 1%, պարզևատրում և խրախուսում՝ 1.2% պրակտիկայի ծախսեր ՝ 1% ինչպես նաև ուսումնական նյութերի ձեռքբերումը՝ 0.8%, հետազոտություն և զարգացում՝ 0.6%, արտաքին կապեր և միջազգայնացում՝ 0.6%, ՈՆԱԿ՝ 0.6%, գովազդ՝ 1%։

Քոլեջը չունի պետական ֆինանսավորում, հիմնական եկամուտները գոյանում են ուսանողների վարձավճարներից։ Քոլեջի տվյալների համաձայն վերջին տարիներին ուսանողների թվաքանակի աճով պայմանավորված բյուջեն ունի կայուն դրական դինամիկա։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն։ Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր, քոլեջը նախատեսում է իրականացնել կարճաժամկետ դասընթաց, որի համար արդեն իսկ մշակվել է ծրագիր՝ «Բուժական կոսմետոլոգիա»։

Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ֆինանսական ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել։ Չի իրականացվել նաև առանձին կրթական ծրագրերին անհրաժեշտ ռեսուրսների համալրման կարիքների հաշվառում, այդ գործընթացը հիմնականում իրականացվում է դասախոսների անհատական առաջարկների հիման վրա՝ իրենց դասավանդած մոդուլի համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների ձեռք բերման առաջարկների ձևով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, քոլեջի ղեկավարությունը հստակ գիտակցում է քոլեջի ռեսուրսային բազայի համալրման կարիքները որպես ռազմավարական առաջնահերթություն։

Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն չի իրականացվել, քոլեջը փորձում է ավելի ցածր ուսման վարձավճար առաջարկել քան նույնանման կրթական ծրագրեր իրականացնող մյուս քոլեջները։

Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է էլեկտրոնային փոստի միջոցով։ Հաստատության ներսում՝ «Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգով» հաստատված մեխանիզմներով՝ հիմնականում թղթային տարբերակով։ Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ։

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջի (հանրակրթական դպրոցի) տարածքը ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ,

պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարքավորումներ, առկա են տարհանման պլաններ: Քոլեջն ունի անվտանգության ծառայություն: Քոլեջի շահակիցները անհրաժեշտության դեպքում օգտվում են հանրակրթական դպրոցի բուժկետից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ: Առկա են թեքահարթակներ:

Ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման համար քոլեջում իրականացվում են հարցումներ շահակիցների շրջանում: Քոլեջի տվյալների համաձայն դասախոսների և ուսանողների շրջանում, իրականացված հարցումների արդյունքներով ուսանողների բավարարվածությունը լսարանային պայմաններից կազմում է 87.6% է, իսկ դասախոսներինը՝ 74.7%, միևնույն ժամանակ ուսանողների 36,7%-ը, քոլեջի ընդհանուր ռեսուրսները գնահատել է ոչ այնքան բարվոք, իսկ դասախոսների 70,7 %-ը գոհ են լսարանների նյութատեխնիկական ապահովվածությունից: Գնահատվել է նաև բավարարվածությունը համացանցից՝ ըստ որի գոհ են ուսանողների 66.6%-ը, դասախոսների՝ 64.7%-ը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ենթակառուցվածքների և ռեսուրսների բարելավումը քոլեջը դիտարկել է որպես ռազմավարական առաջնահերթություն, այդուհանդերձ քոլեջի աշխատանքները և գործընթացների բնականոն զարգացումը հանգեցրել է այն իրավիճակին, որ վարձակալված տարածքի սահմանափակ լինելը թույլ չի տալիս քոլեջին ավելացնել իր մասնագիտությունների ընդունելության սահմանային տեղերը և/կամ ներդնել նոր մասնագիտություններ, չնայած դիմորդների հետաքրքվածությանը: Այս տեսանկյունից կարևոր է, որ խնդիրը գտնվում է քոլեջի տնօրինության ուշադրության ներքո: Փորձագիտական խումբը ընդգծում է, որ խնդրի լուծումը հրատապ է քոլեջի համար՝ հատկապես ժամանակին համահունչ ենթակառուցվածքներ ստեղծելու համար:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ չնայած տարածքը վարձակալվում է, այդուհանդերձ իր սեփական միջոցներով քոլեջը ստեղծել և կահավորել կաբինետներ, լսարաններ, ձեռք է բերել ուսումնական գույք, տեխնիկական միջոցներ, ապահովում է անհրաժեշտ ուսումնական գույք դասավանդողների և ուսումնառողների համար: Նաև դրական է, որ սեփական ռեսուրսների բացը քոլեջը լրացնում է ոլորտային կազմակերպությունների, կենտրոնների հետ համագործակցության միջոցով: Քոլեջը նույն կենտրոնների հետ համագործակցում է նաև պրակտիկաների կազմակերպան համար: Աշխատաշուկայի հետ կապը ամրապնդվում է նաև գոծատու ոլորտից ներգրավված դասավանդողների միջոցով, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում ուսանողների գիտելիքների և հմտությունների ձևավորման համար, ինչպես նաև հետագայում աշխատանքի անցնելու համար: Վերոնշյալը գնահատելով որպես ուսանողների կրթական կարիքների ապահովմանը ուղղված ռացիոնալ լուծում, փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի ենթակառուցվածքների համալրումը ՊԿՉ-ով սահմանված կաբինետներով և լաբորատորիաներով, ինչը ինստիտուցիոնալ և երկարաժամկետ ներդրում կլինի քոլեջի շարունակական զարգացման համար:

Հարկ է նշել, որ քոլեջը ուսանողներին ապահովում է ուսումնառության նյութերով, սակայն մասնագիտական գրադարանի բացակայությունը որոշակիորեն կարող է

անդրադառնալ ուսանողների ինքնուրույն աշխատանքների, ռեֆերատների կատարման որակի վրա։ Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը ստեղծի ինչպես գրադարան, այնպես էլ ավարտին հասցնի իր նախաձեռնությունը անդամակցելու էլեկտրոնային մասնագիտական շտեմարաններին, ինչը նպաստավոր պայման կհանդիսանա ինչպես դասավանդողների համար (հասանելիություն արդի գրականությանը), այնպես էլ ուսումնառողների։ Քոլեջը խրախուսելով դասավանդողներին՝ կարող է դիտարկել նաև ուսումնամեթոդական ձեռնարկներ տպագրելու հնարավորությունները, օգտագործելով իր ներուժը։

Հաշվի առնելով, որ քոլեջը ինքնաֆինանսավորվող հաստատություն է, փորձագիտական խումբը դրական է համարում վերջին տարիներին արձանագրված բյուջեի դրական դինամիկան, նաև այն հանգամանքը, որ թեև ՌԾ-ում առկա բյուջեի հնգամյա բաշխումը ընդհանրական է եղել ըստ ուղղությունների և հստակ ցույց չի տալիս գործողությունների իրականացման համար պահանջվող միջոցները և ժամկետները, այդուհանդերձ, եկամուտների և ծախսերի ուսումնասիրությունը փաստում է, որ նախանշված ուղղություններով քոլեջը իրականացրել է որոշակի ծախսեր՝ որոնք բյուջեի կատարողականում ներկայացված են առանձին հոդվածների ներքո։ Մյուս կողմից փորձագիտական խմբի համար մտահոգիչ է, որ միայն ուսման վարձավճարներից մուտքերը, համադրված վարձակալված սահմանափակ հնարավորություններով ենթակառուցվածքի հետ, ներկա փուլում խոչընդոտում են ավելի շատ ուսանողներ ունենալու հեռանկարը և ստեղծում է ֆինանսատնտեսական «փակուղի» քոլեջի համար։ Չնայած վերոնշյալին, քոլեջը ֆինանսական միջոցները նախ և առաջ ուղղում է կրթական գործընթացների բնականոն ընթացքի ապահովմանը՝ ինչպես օրինակ դասավանդողների աշխատավարձերի բարձրացում, վճարովի պայմանագրերի կնքում, պրակտիկաների և ուսումնական գործընթացի կազմակերպում, գույքի, նյութերի և միջոցների ձեռքբերում և այլն։ Անհարժեշտ է, որ քոլեջը մշակի հստակ ռազմավարություն, վերոնշյալ իրավիճակից դուրս գալու համար, որի հիմնական լուծումը ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացիան է, այս ուղղությամբ արդեն իսկ նախաձեռնված աշխատանքները կարող են նպաստավոր պայմաններ ստեղծել որպեսզի քոլեջ կարողանա լուծել առկա ճգնաժամը։

Փորձագիտական խումբը կարևորում է նաև ներքին և արտաքին հաղորդակցման և փաստաթղթաշրջանառության արդի տեղեկատվահաղորդակցման տեխնիկական միջոցների կիրառությունը քոլեջում, որը կնպաստի միասնական տվյալների բազաների ստեղծմանը, արագ և հուսալի փաստաթղթաշրջանառությանը, փաստաթղթավորման, պլանավորման և հաշվետվողականության միասնական մոդելների կիրառությանը, ինչպես նաև կառավարման ինստիտուցիոնալ մեխանիզմների կայունացմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ենթակառուցվածքների և ռեսուրսների բարելավումը հանդիսանում է ռազմավարական ուղղություն, որի համար քոլեջը պլանավորել և իրականացրել է որոշակի քայլեր, ՌԾ ուղղությունների զարգացման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ, ապահովված է ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրով, ուսումնական ռեսուրսների համալրման և կրթական վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերման նպատակով կիսում է գործընկերային

ռեսուրսները, պարբերաբար միջոցներ են տրամադրվում նյութատեխնիկական բազայի արդիականացման և համալրման համար, ապահովված է ներքին շահակիցների անվտանգային միջավայրը փորձագիտական խումբը գտնում է որ քոլեջը **բավարարում** է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Քոլեջը 2022թ. մշակել է «Շահակիցների առջև հաշվետվողականության ապահովում» ընթացակարգը: Ընթացակարգի նպատակն է ապահովել քոլեջի և առանձին ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ հաշվետվողականություն քոլեջի ներքին (ուսումնառողներ, պրոֆեսորադասախոսական կազմ) և արտաքին (պետական մարմիններ, գործատուներ, շրջանավարտներ, հասարակություն) շահակիցներին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում հիմնականում գործում է հաշվետվողականության ներքնից վերև համակարգ: Վերևից ներքև հաշվետվողականությունը ՄՈՒՀ-ը փորձում է ապահովել կոլեգիալ մարմինների միջոցով, այդուհանդերձ այս մեխանիզմը դեռևս ձևավորման փուլում է: Քոլեջի ստորաբաժանումները տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունը ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքով նախատեսված ղեկավարին կամ համապատասխան խորհուրդում: Առանձին հաշվետվություններում տեսանելի են վերլուծական մոտեցումներ, կամ հաջորդ պլանավորման բարելավման առաջարկներ, ինչպես օրինակ փոխտնօրենի և տնօրենի տարեկան հաշվետվությունները 2023-2024 ուստարվա համար, սակայն այս մոտեցումը ինստիտուցիոնալ չէ: Ստորաբաժանումների հաշվետվությունները հիմնականում կրում են նկարագրական բնույթ, ամփոփվում է իրականացված գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը: Տնօրենի տարեկան հաշվետվությունը կազմվում է հաշվի առնելով քոլեջի գործունեության և ռազմավարական ծրագրի տարբեր ուղղություններով կատարված ստորաբաժանումների աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվությունը: Այդուհանդերձ հարկ է նշել, որ տեսանելի չէ հաշվետվության մեջ ներկայացված որոշ քանակական և որակական վերլուծությունների փոխկապակցումը ՌԾ-ի առաջընթացի գնահատման ցուցիչների հետ: Տնօրենը իր հաշվետվությունը ներկայացնում է Կառավարման խորհրդում: Ընթացակարգով սահմանված քոլեջի արտաքին հաշվետվողականության ապահովման միջոցներից կայքէջը դեռևս նպատակային չի կիրառվում:

2023թ. քոլեջը իր հաստիքացուցակում ավելացրել է նաև հասարակության հետ կապերի և լրագրության բաժնի ղեկավարի հաստիքը: Հստակեցվել է հասարակության հետ կապերի ուղղությամբ քոլեջի ակնկալիքները և իրականացվող աշխատանքները: Քոլեջի հարթակները կիրառվում են ինչպես տեղեկատվության տարածման, այնպես էլ (SMM) մարքեթինգային գովազդի իրականացման համար: Նշված ժամանակահատվածում բաժնի պատասխանատուի կողմից նաև վերլուծվել է հարթակների դիտելիությունը, ըստ այդմ տեսանելի է դրական դինամիկա, սակայն տեղադրված գովազդի արդյունքում քոլեջի հավաքագրված դիմորդների վերաբերյալ դեռևս հստակ տվյալներ առկա չեն: Քոլեջը ընթացակարգերի, գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը հասարակությանը հասանելի է դարձնում կիրառելով Ֆեյսբուք և Ինստագրամ սոցիալական հարթակները, որտեղ առկա տեղեկատվությունը պարբերաբար թարմացվում է: Լուսաբանվում են քոլեջում գործող մասնագիտությունների, ուսումնական գործընթացի, կրթության շարունակման հնարավորությունների, և այլ իրականացվող միջոցառումների մասին՝ ուսանողների ճանաչողական այցեր, ուսանողական առօրյա և այլն: Հարկ է նշել, որ հարթակները սահմանափակ հնարավորություններ են ընձեռում գործընթացների և փաստաթղթերի հրապարակման՝ ներքին և արտաքին հաշվետվողականության լիարժեք ապահովման համար:

2023թ.-ից քոլեջում (վերա)գործարկվել է իր պաշտոնական կայքէջը (http://provisorlsmedcollage.am/), որը երկլեզու է՝ հայերեն և անգլերեն: Փորձագիտական այցի դրությամբ կայքէջը համալրված է որոշ տեղեկատվությամբ քոլեջի պատմության մասին, ներկայացված են գործող մասնագիտությունները և համագործակցող կազմակերպությունների անունները, սակայն ներկայումս կայքը չի գործում:

2023թ.մշակվել է «Շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման կանոնակարգը», որտեղ հստակեցվել է շահակիցների շրջանակները: Համաձայն կանոնակարգի ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի հիմնական միջոցներն են հարցումները, սեմինար քննարկումները, հանդիպումները: Արտաքին շահակիցների հետ հանդիպումները նախատեսվում է իրականացնել տարեկան մեկ անգամ: Հասարակության հետ հետադարձ կապի հաստատման միջոցների ուսումնասիրությունից և փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, քոլեջի հասարակության հետ հետադարձ կապի միջոցներն են հանդիսանում պաշտոնական էլեկտրոնային հասցեն և սոցիալական հարթակները: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ֆեյսբուքյան էջի հաղորդագրության հարթակներով հիմնականում դիմում են մասնագիտությունների, վարձավճարների, մասնագիտություններում առկա տեղերի քանակի հետ կապված հարցերով: Էլեկտրոնային հասցեն կիրառվում է պաշտոնական նամակագրության համար: Քոլեջը հետադարձ կապ է ստանում նաև տնօրենի և փոխտնօրենի կողմից ծնողների և գործատուների հետ կազմակերպվող հանդիպումների ժամանակ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից նախատեսվում են կազմակերպել հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված միջոցառումներ, մասնավորապես կարճաժամեկտ դասընթացներ, որոնց իրականացման համար մշակված են ծրագրեր: Նաև պարզ դարձավ, որ ուսանողները կամավորություն են իրականացրել 2020թ. պատերազմի ժամանակ: Գործատու-դասավանդողի առաջարկությամբ

ուսանողները կամավորության սկզբունքով հերթապահություն են իրականացնում պրակտիկայի վայրերում: Քոլեջում կազմակերպվում են բաց զեկուցումներ ուսանողների կողմից իրականացված հետազոտական բնույթի աշխատանքների շուրջ՝ օրինակ «Covid-19», «Ծխախոտ-ալկոհոլ», «Ճարպակալում» թեմաներով, որին մասնակցում են հյուրեր, ծնողներ, ուսանողներ, դասախոսներ: Հարկ է նշել, որ վերոնշյալ միջոցառումները դեռևս չեն կրում համակարգված բնույթ:

Քոլեջը նախատեսում է ներդնել տարբեր մասնագիտությունների գծով լրացուցիչ կրթական դասընթացներ և մատուցել խորհրդատվական ծառայություններ քոլեջի ուսանողների և դասընթացներին մասնակցել ցանկացող այլ անձանց համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում են հաշվետվողականության սահմանված մեխանիզմներ, որոնք նպաստում են քոլեջի գործունեության հաշվետվողականության ապահովմանը: Հարկ է ընդգծել, որ թեև ձևավորված է վերևից ներքև հաշվետվողականության համար անհրաժեշտ կոլեգիալ կառավարման օղակները, այդուհանդերձ վերջիններս լիովին չեն ապահովում հաշվետվողականության այս մեխանիզմի արդյունավետ կիրառությունը, քանի որ տեղեկատվության տարածումը շարունակություն չի գտնում ներքին շահակիցների ավելի լայն շրջանակներում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ այդ գործընթացը կրում է ձևական բույթ: Մյուս կողմից հաշվետվությունները նկարագրական բնույթի լինելը նվազեցնում է դրանց արդյունավետությունը որպես գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի ներդնումը ինստիտուցիոնալ մակարդակում, հնարավորություն կտա կատարած աշխատանքների հիման վրա վեր հանել խնդիրներ և կազմել հաջորդ տարվա պլանավորումը: Քոլեջի կողմից մշակված հաշվետվողականության փաստաթղթերի կիրառությունը արդյունավետ կարող է լինել, եթե ապահովի ընթացակարգով սահմանված գործիքակազմի կիրառությունը:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև այն փաստը, որ հասարակության հետ կապերի և լրատվության բաժնի ղեկավարի աշխատանքները որոշակիորեն համակարգել են գործընթացների հրապարակայնության ապահովման և արտաքին հաշվետվողականության մեխանիզմների կիրառությունը, որը անդրադառնում է նաև քոլեջի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը: Իրականացված աշխատանքները նպաստել են նաև հասարակության հետ հետադարձ կապի ամրապնդմանը մասնավորապես սոցիալական հարթակների միջոցով, իսկ պաշտոնական կայքէջը ներկայումս չի ապահովում տեղեկատվության լիարժեք հրապարակայնությունը քոլեջի գործընթացների վերաբերյալ, գործարկման աշխատանքները պասիվ են, պաշտոնական էջը հասանելի չէ ներքին և արտաքին շահակիցներին: Հաշվի առնելով քոլեջի նախաձեռնած միջազգայնացման աշխատանքները, կարևոր է, որ կայքէջը գործի ըստ իր նշանակության ապահովելով անհրաժեշտ տեղեկատվությունը ինչպես տեղական այնպես էլ արտաքին գործընկերների համար:

Դրական է, որ քոլեջը որոշակիորեն կիրառում է հետադարձ կապի միջոցները, որոնք հիմնականում սոցիալական հարթակներն են, էլեկտրոնային հասցեն, թեև որոշակիորեն վերլուծվել է այդ միջոցներով ստացվող տեղեկատվությունը ըստ բովանդակության, սակայն

ավելի խորքային վերլուծություններ դեռևս չեն իրականացվել: Փորձագիտական խումբը ընդգծում է հետադարձ կապի միջոցների արդյունավետության գնահատման անհրաժեշտությունը, որը թույլ կտա ՄՈՒՀ-ին առավել նպատակային կիրառել հետադարձ կապի միջոցով ստացվող տեղեկատվությունը, ինչպես նաև դրանք տարանջատել ըստ օբյեկտիվության և կիրառելիության:

Դրական է, որ քոլեջի ուսանողները որոշակիորեն ներգրավված են հասարակական նշանակության աշխատանքներում, որը նպաստում է մասնագիտական ինքնագիտակցության ամրապնդմանը: Թեև առկա են բոլոր նախադրյալները, այդուհանդերձ գիտելիքների և արժեքների փոխանցումը դեռևս համակարգված չէ որպես շարունակական գործընթաց: Գործընթացների պլանավորումը և համակարգումը թույլ կտա ՄՈՒՀ-ին բարձրացնել քոլեջի հասարակական պատասխանատվությունը, նպաստելով ուսանողների մասնագիտական կարողությունների ամրապնդմանը և կատարելագործմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ձևավորվում է ներքին ու արտաքին հաշվետվողականության համակարգ, առկա են գործընթացների թափանցիկության ու հասանելիության ապահովման մեխանիզմներ, կիրառվում են հետադարձ կապի ապահովման գործիքներ, քոլեջի կողմից ներդրվում են հասարակությանն արժեքների փոխանցման միջոցառումներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Քոլեջը 2020-2024թթ. ՌԾ-ում Միջազգայնացումը և գործակցությունը սահմանվել է որպես ռազմավարական ոլորտ, սակայն հստակ նպատակ ձևակերպված չէ, այս ուղղությամբ սահմանվել են հետևյալ խնդիրները՝ իրականացնել քոլեջի միջազգայնացմանն ուղղված միջոցառումներ նպաստող քաղաքականություն, զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում:

2022թ. քոլեջը մշակել է «Միջազգայնացման հայեցակարգը», ստեղծվել է Արտաքին կապերի և միջազգայնացման բաժինը, մշակվել է «Արտաքին կապերի և միջազգայնացման բաժնի կանոնադրությունը», պատասխանատուի պաշտոնի անձնագիրը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքները հիմնականում ակտիվացել են սկսած 2023թ-ից: Քոլեջի միջազգայնացման գործընթացը ապահովում է Արտաքին կապերի և

միջազգայնացման բաժնի պատասխանատուն՝ ըստ բաժնի կանոնադրության և իր պաշտոնի անձնագրով սահմանված գործառույթների: Պատասխանատուի աշխատանքային պլանի դիտարկումը ցույց է տալիս, որ հիմնականում պլանավորված են արտաքին գործընկերների հետ կապերի հաստատումը, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տեղական գործընկերների հետ համագործակցությունը ապահովվում է ինչպես տնօրենի, այնպես էլ պրակտիկայի և կարիերայի ուղղորդման պատասխանատուի միջոցով:

Հաստատությունը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է ընդհանուր թվով 12 տեղական գործընկերների հետ: Քոլեջը կնքել է համագործակցության պայմանագրեր «Գրիգորիս» բժշկա-հումանիտար հետ, Երևանի հենակետային բժշկական, Վարդենիսի բժշկա-հումանիտար, Վարդենիսի բժշկական, Բաղեյան պետական բժշկական, Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջների հետ փորձի փոխանակման, բենչմարքինգի իրականացման և այլ միջոցառումների կազմակերպման նպատակով: Ուսանողների կրթության շարունակականության ապահովման նպատակով պայմանագրեր են կնքվել նաև «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի, Ամերիկյան համալսարանի, «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի և Ավանդական բժշկական համալսարանի հետ:

ՄՈՒՀ-ն ունի գործատու գործընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության արդյունքում հաստատությունը կազմակերպում է ուսումնառության գործընթացը, ուսանողների տեսական, գործնական պարապմունքների և պրակտիկաների կազմակերպումը: Համագործակցության պայմանագրեր են կնքվել «Դա Վինչի» կլինիկայի Բ/Կ-ի, «Իդեն» էսթետիկ կենտրոնի, Հայկական կարմիր խաչ ընկերության, «Արփիմեդ» դեղագործական ընկերության, Արմենիա ՓԲԸ, Գրիգոր Նարեկացի Բ/Կ-ի, «Բելլա Դենտ» ստոմատոլոգիական կենտրոնի, III մանկական ստոմատոլոգիական կլինիկայի հետ: Առկա են համագործակցության հուշագրեր՝ առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոնի», ԱՅԳ «Ավելին քան դեղատուն» ՓԲԸ-ի, «Ավանդական բժշկության համալսարան», «Բիո-քիմ» ընկերության և այլ կազմակերպությունների հետ:

Ինչ վերաբերվում է արտասահմանյան գործընկերների հետ կապերին, քոլեջ այս ուղղությամբ աշխատանքները սկսել է 2023թ. արտաքին կապերի և միջազգային համագործակցության բաժնի պատասխանատուի նշանակումից հետո: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փորձ է կատարել կապ հաստատել տարբեր երկրների նմանատիպ քոլեջների հետ: Ներկայումս համագործակցային կապեր են ձևավորվել (փոխադարձ հետաքրքրվածություն, սակայն համագործակցության պայմանագրեր կնքված չեն) Եվրոպական երկրների (Շվեդիա, Իսպանիա, Պորտուգալիա, Սերբիա) և Հնդկաստանի կրթական կազմակերպությունների հետ, որոնք իրականացնում են միջին մասնագիտական բժշկական կրթություն:

Քոլեջը անգլերեն լեզվով թարգմանել և արտասահմանյան քոլեջներին է տրամադրել իր պատմությունը, իրականացրած կրթական ծրագրերի ցանկը, որակավորումները, իսկ «Քույրական գործ» մասնագիտության համար թարգմանվել է նաև ուսումնական պլանը, նպատակ ունենալով իրականացնել փոխադարձ բենչմարքինգ: 2024թ. քոլեջի հայցին

արձագանքնել է Իսպանիայի Խավիար Գարսիա Թելլես քոլեջը, տրամադրելով իր ուսումնական պլանը: Քոլեջը ձևավորել է բենչմարքինգի հանձնաժողով և իրականացրել է «Քույրական գործ» ՄԿԾ-ի բենչմարքինգը՝ համեմատական վերլուծությունը, փոխադարձաբար բենչմարքինգ է կատարվել նաև Խավիար Գարսիա Թելլես քոլեջի կողմից, որի արդյունքները տրամադրվել են քոլեջին: 2024թ. Հնդկաստանի (Ռաջաստան նահանգի) Բանաշտհալի համալսարանի հետ կնքվել է համագործակցության հուշագիր քոլեջի հետ փորձի փոխանակման և դասընթացների կրեդիտների փոխճանաչման ինչպես նաև դասավանդողների և ուսումնառողների շարժունության ծրագրեր իրականացնելու համար:

ՄՈՒՀ-ը ակտիվ քայլեր է ձեռնարկում «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու ուղղությամբ: Քոլեջը մասնակցել է Էրազմուս+ ծրագրի շրջանակներում մի շարք միջոցառումների՝ քոլեջում կազմակերպված հանդիպմանը՝ «Էրազմուս +» ծրագրի կողմից ՄԿՈՒ ոլորտին տրամադրվող ֆինանսական հնարավորություններին և դրանց պայմանների վերաբերյալ, «Էրազմուս+ տեղեկատվական օրեր 2023»-ին: 2023թ.-ին Քոլեջը շնորհանդեսով մասնակցել է նաև Հայաստանի և Սերբիայի «Էրազմուս +» ազգային գրասենյակների համատեղ (նեթորքինգային հանդիպմանը) աշխատաժողովին: Քոլեջը գործընկերային կապ է հաստատել Սերբիայի կրթական կազմակերպության «IPODOMI»-ի հետ, որից հրավեր է ստացել ամռային այց կատարել՝ փորձի փոխանակման և համագործակցության նպատակով: 2024թ.-ին մեկնարկած՝ դրամաշնորհային ծրագրեր գրելու փորձի փոխանակմանն ուղղված հանդիպման շրջանակներում, քոլեջը ընդգրկվել է Շվեդիայի միջազգային «Էրազմուս +» ծրագրում՝ վիրտուալ «Եվրովետա» դրամաշնորհային նախագծում, որի կազմում ընդգրկված են 7 (յոթ) քոլեջներ ՀՀ-ից, ինչպես նաև Լեհաստանի, Ուկրաինայի, Իտալիայի ու Շվեդիայի ՄՈՒՀ-երը:

Քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման բաժնի պատասխանատուն մասնակցել է «Դասավանդման նոր մեթոդները՝ ուղղված արհեստական բանականության մարտահրավերին» թեմայով թվով յոթ հանդիպում-քննարկումներին:

Քոլեջը որոշակիորեն ակտիվություն է դրսևորում նաև միջազգային միջոցառումներին ուսանողների մասնակցությամբ: Քոլեջի «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության I կուրսի 5 ուսանող, պատրաստվում են մասնակցել 2024թ. անգլերեն լեզվի II միջազգային օլիմպիադային՝ Ռումինիայի Կոնստանցա քաղաքում:

Չնայած առկա է փոխադարձ բենչմարքինգ արտասահմանյան քոլեջի հետ, քոլեջը որոշակիորեն ներգրավված է «Էրազմուս +» տարբեր ծրագրերում, սակայն դեռևս ակադեմիական շարժունության նախադեպ քոլեջում չի եղել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ակադեմիական շարժունության ծրագրերին մասնակցության հիմնական դժվարությունը քոլեջը համարում է ուսանողների և դասավանդողներ մոտ լեզվահմացության պակասը՝ մասնավորապես անգլերեն լեզվին տիրապետելու մակարդակը: Համաձայն քոլեջի ներկայացրած տվյալների դասավանդողների 69,4%-ը տիրապետում է անգլերեն լեզվին, վարչական աշխատակիցների՝ 30,6%-ը տիրապետում են օտար լեզուների (ռուսերեն կամ անգլերեն):

Քոլեջի կողմից ուսանողների և դասախոսների միջազգային նախագծային աշխատանքներում ներգրավումը խրախուսվում է, այդ առումով մեծ տեղ է տրվում օտար լեզվի (անգլերեն) իմացության բարձրացման նպատակով կազմակերպվող

վերապատրաստումներին: Օտար լեզվի (անգլերեն) մասնագիտական մակարդակի իմացությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել են լրացուցիչ անվճար դասընթացներ ուսանողների համար, 2023-2024 ուստարվա I և II կիսամյակներում «Անգլերենը բժշկական միջավայրում», և 2024թ.-ի II կիսամյակում նաև կազմակերպվել է «Անգլերենը ակադեմիական միջավայրում» դասախոսների համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2025թ. պլանավորվում է ներդնել նաև «Օտար լեզվի (անգլերեն) իմացության ծրագիրը»:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջում արտաքին կապերի և միջազգային համագործակցության ուղղությամբ իրականացված աշխատանքները, հարկ է նշել, որ քոլեջը միջազգայնացումը և համագործակցությունը սահմանել է որպես ռազմավարական ոլորտային ուղղության, սակայն այս ուղղությամբ հստակ չեն ձևակերպվել նպատակները, այդուհանդերձ նշվել են երկու բավականին լայն խնդիրներ: Ըստ այդմ չի պահպանվում նպատակների խնդիրների սահմանման տրամաբանությունը, որը կարող է խոչընդոտել քոլեջի միջազգայնացման ուղղությամբ քայլերը:

Քոլեջը ներկա փուլում քայլեր է իրականացրել արտաքին կապերի և միջազգայնացման բաժնի ստեղծման ուղղությամբ, նշանակվել է բաժնի պատասխանատու, մշակվել է փաստաթղթային հենք, այդուհանդերձ բաժինը դեռևս համալրված չէ այլ աշխատակիցներով, իսկ պատասխանատուի գործունեությունը առավելապես առնչվում է միջազգային համագործակցության տիրույթին, տեղական գործընկերների հետ կապերը ապահովվում են տնօրենի և պրակտիկայի և կարիերայի ուղղորդման պատասխանատուի միջոցով: Թեև ներկա փուլում աշխատանքների նմանօրինակ բաշխումը թույլ է տվել թիրախային քայլեր կատարել արտաքին համագործակցության և կապերի ստեղծման ուղղությամբ, սակայն փորձագիտական խումբը նաև ակնհայտ է համարում այն, որ մեկ պատասխանատուի առկայությունը որպես տվյալ ռազմավարական ուղղության զարգացման համար ներգրավված մարդկային ռեսուրս բավարար չէ քոլեջի արտաքին կապերի կառավարման և առաջադրած նպատակների իրականացման համար, ինչը հանգեցրել է մի քանի պատասխանատուների միջոցով աշխատանքների իրականացմանը: Հաշվի առնելով ռազմավարական տվյալ ուղղության ներդրման նպատակը և տեսլականը, հետագայում գործընթացների բաշխումը մի քանի պատասխանատուների միջև կարող է նվազեցնել գործընթացների արդյունավետությունը:

Կարևոր է, որ քոլեջը գնահատի բաժնի համալրման նպատակայնությունը անհրաժեշտ աշխատակիցներով, ինչը թույլ կտա հստակեցնել արտաքին կապերի և միջազգայնացման բաժնի աշխատանքները, ձևավորել գործառնական կապեր մյուս ստորաբաժանումների և/կամ դրանց պատասխանատուների հետ, ինչպես օրինակ պրակտիկայի և կարիերայի ուղղորդման պատասխանատուի հետ: Փորձագիտական խումբը դրական է համարում տեղական գործընկերների, այլ քոլեջների, բուհերի, գործատու ոլորտի և պրակտիկաների բազաների հետ ձևավորված կապերը, որոնք հիմնականում նպաստում են կրթական գործընթացների արդյունավետ կազմակերպմանը: Այդուհանդերձ անհրաժեշտ է հստակեցնել և գնահատել գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետությունը, տարբերակել դրանք ըստ նշանակության: Այս ուղղությամբ վերլուծությունների

արդյունքները կարող են նպաստել քոլեջի համագործակցության շրջանակների ընդլայնմանը և խորացմանը, արտաքին կապերի բազմազանեցմանը:

Ինչ վերաբերվում է միջազգային կապերին, ապա քոլեջը մի քանի ուղղություններով քայլեր է ձեռնարկել՝ այլ նմանատիպ քոլեջների հետ միջազգային բենչմարքինգ, «Էրազմուս +» ծրագրերին ինտեգրում, միջազգային վերապատրաստումների, սեմինարների մասնակցություն, օտար լեզվի իմացության բարձրացում և այլն: Արժևորելով վերոնշյալ քայլերը փորձագիտական խումբը կարևորում է արտաքին համագործակցության հստակ ուղղվածությունը, մասնավորապես, որ կրթական տարածքի հետ է հնարավոր շարունակական համագործակցություն ձևավորել, շարժունության ծրագրեր իրականացնել և այլն:

Թեև շահակիցների օտար լեզվի իմացության բարձրացման ուղղությամբ որոշ քայլեր են եղել սակայն դրանք կրել են հատվածային բնույթ, օտար լեզվի դասընթացի մշակումը հանդիսացել է որակի ապահովման պատասխանատուի ինչպես նաև արտաքին կապերի և միջազգայնացման բաժնի պատասխանատուի աշխատանքային գործառույթներից մեկը, այս մոտեցումը կարող է ոչ արդյունավետ լինել, հաշվի առնելով որ վերոնշյալ բաժինների կոմպետենցիաներից դուրս է դասընթացների կազմակերպումը: Փորձագիտական խումբը ընդգծում է օտար լեզվի իմացության բարձրացման ուղղությամբ գործընթացների հստակեցման անհրաժեշտությունը, մասնավորապես ինչպես և ինչ մեթոդաբանությամբ են անցկացվելու դասերը, որոնք են լինելու քոլեջի ակնկալիքները այդ դասընթացներից: Նաև կարևոր է, որ տվյալ գործընթացում որպես պատասխանատուներ ներգրավվեն կոմպետենտ և բանիմաց կազմակերպիչներ, մասնագետներ: Այս տեսանկյունից գործընթացների շարունակականության ապահովումը, ինչպես նաև օտար լեզվի իմացությունը (ռուսերեն, անգլերեն) որպես միջոց (փափուկ հմտություն, հնարավորություն) փոխկապակցումը ՄԿԾ-ների հետ, թույլ կտա ներգրավել ուսանողներին և դասավանդողներին միջազգային փորձի ուսումնասիրությանը տարբեր մակարդակներում՝ հետազոտություն, սեմինարներ, կոնֆերանսներ, դասավանդում, վերապատրաստումներ և այլն, ինչը իր հերթին թույլ կտա խթանել քոլեջի ինտեգրումը միջազգային կրթական հարթակներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ը ներդրել է արտաքին կապերի ապահովման ենթակառուցվածք, որը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց, ՌԾ-ում արտաքին կապերը և միջազգայնացումը հանդիսանում են ռազմավարական ուղղություն, արդյունավետ կապեր են գործում տեղական գործընկերների և գործատու ոլորտի հետ, արտաքին կապերը նպաստում են ուսանողների շարունակական կրթության ապահովմանը, իրականացվել են քայլեր միջազգային համագործակցություններ հաստատելու ուղղությամբ, ինչպես նաև օտար լեզվի իմացության բարձրացման ուղղությամբ, փորձագիտական խումբը, գտնում է, որ քոլեջը **բավարարում է** չափանիշ 9-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Համաձայն ինքնավերլուծության զեկույցի ՈԱ քաղաքականությունը և ՈԱ ռազմավարության մշակման աշխատանքները 2020թ. ղեկավարել է Քոլեջի տնօրենը: Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց տվեցին, Քոլեջի 2020-2024 ՌԾ-ում Որակի ապահովման ներքին համակարգի զարգացմանը միտված առանձին նպատակներ և խնդիրներ սահմանված չեն, սակայն ՄՈՒՀ-ը տարբեր ոլորտային ուղղություններում ներառել է այդ ուղղությամբ գործողություններ, օրինակ՝ «Որակյալ կրթություն» ոլորտում, ըստ էության այդ գործողությունները միտված են լուծելու խնդիրներ, որոնք ուղղակիորեն փոխկապակցված չեն, սակայն իրականացվում են ՈՆԱԿ-ի միջոցով: Հիմնականում որակի ապահովման գործընթացները առնչվում են տարբեր շահակիցների շրջանակներում կազմակերպվող հարցումների հետ: ՌԾ-ում տեսանելի չէ Որակի ներքին ապահովման համակարգի լիարժեք զարգացմանը ուղղված գործողությունները:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՈՆԱ 2020-2024թթ.-ի ռազմավարությունը մշակվել է Քոլեջի տնօրենի կողմից մինչև քոլեջում ՈՆԱԿ-ի ստեղծումը, իսկ բովանդակային առումով այն ընդհանրացնում է ՌԾ-ում ՈԱ գործընթացներին առնչվող գործողությունները, ինչպես նաև նշված ռազմավարությամբ պլանավորվել է 2020-2021թ.-ներին ստեղծել Որակի ներքին ապահովման կենտրոն և համապատասխան փաստաթղթային հենք: Սակայն կենտրոնը փաստացի ստեղծվել է 2022թ.-ին՝ Հիմնադիրների խորհրդի որոշմամբ, այդուհանդերձ հարկ է նշել, որ ՈՆԱԿ-ը, որպես ստորաբաժանում դեռևս լիարժեք ձևավորված չէ՝ կենտրոնը համալրված է միայն պատասխանատու-ղեկավարով:

Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները իրականացնելու համար 2022թ. մշակվել և հաստատվել է «Որակի ապահովման կենտրոնի» կանոնադրությունը, «Քոլեջի Որակի ապահովման հայեցակարգը», Որակի ապահովման պատասխանատուի պաշտոնի անձնագիրը: Մշակված հայեցակարգում սահմանվում են որակի ներքին ապահովման քաղաքականությունը, կենտրոնի կազմակերպական կառուցվածքը, գործող մեխանիզմները և ընթացակարգերը:

Որակի ապահովման պատասխանատուն /կենտրոնի ղեկավարը/ համաձայն իր պաշտոնի անձնագրի նշանակվում է տնօրենի կողմից, ենթարկվում է ուսումնական գծով փոխտնօրենին, կատարում է վերջինիս հանձնարարականները, նույնը սահմանվում է կենտրոնի կամոնակարգում, սակայն համաձայն կազմակերպական կառուցվածքի ՈՆԱԿ պատասխանատուն ենթակա է տնօրենին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՆԱԿ-ը առանձին Որակի ապահովման ռազմավարություն չի մշակել, սակայն Ռազմավարության մշակումը դեռևս պլանավորված է եղել 2023-2024 ուսումնական տարվա ՈԱ պատասխանատուի աշխատանքային պլանով: 2020-2024թթ. «ՈԱ ռազմավարություն և պլան ժամանակացույց» ներկայացված փաստաթուղթը փաստացի թերի է կիրառվել, քանի որ բազմաթիվ պլանավորված գործողություններ չեն իրականացվել ըստ ժամանակացույցի:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մինչև ՈՆԱԿ-ի ստեղծումը քոլեջը իրականացրել է որոշ աշխատանքներ, օրինակ հարցումներ ուսանողների կողմից դասավանդողների գնահատման համար: ՈՆԱԿ-ի պատասխանատուի մասնակցությամբ, այլ ստորաբաժանումների և ուսումական գծով փոխտնօրենի հետ համատեղ մշակվել են մի շարք փաստաթղթեր, որոնք առնչվում են կրթության որակի ապահովման գործընթացներին՝ «Քոլեջի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգ», «Ուսանողների գնահատման (միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման) կարգ», «Ուսանողների հարցման կանոնակարգ», «Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ», «Ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգ»: Որակի ներքին ապահովման կենտրոնի պատասխանատուի աշխատանքային պլանների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հիմական աշխատանքներն են շահակիցների կարիքների պարբերական ուսումնասիրությունները՝ ուսանողների և շրջանավարտների հարցումները, ՄԿԾ-ների մշտադիտարկման կազմակերպումը: Աշխատանքային պլանում առկա են նաև պլանավորված գործողություններ, որոնք ուղղակիորեն չեն առնչվում ՄՈՒՀ-ում որակի ապահովման գործունեության հետ, ինչպես օրինակ՝ դասախոսների վերապատրաստման գործընթաց, միջազգային համագործակցությանը ուղղված միջոցառումներ, օտար լեզվի դասընթացի մշակում, հետազոտական և նորարարական բաղադրիչ պարունակող միջոցառումների կազմակերպում, գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում, հոդվածների տպագրման աշխատանքներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՆԱԿ պատասխանատուն ներգրավված է վերոնշյալ տարաբնույթ աշխատանքներում, օրինակ՝ մշակել է քոլեջի հետազոտական ռազմավարությունը և ՌԾ պլան-ժամանակացույցը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի որակի պատասխանատուի կողմից պարբերական ձևով իրականացվում են հարցումներ քոլեջի շահակիցների շրջանում՝ վերհանելու ուսանողների, դասախոսների, շրջանավարտների կարիքները: Հարցումները իրականացվում են ինչպես թղթային, այնպես էլ «Google forms» հարթակի միջոցով, իսկ տվյալները վերլուծվում են միայն քանակապես, որակական վերլուծություններ և գնահատականներ տրված չեն: Հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ներառված հարցերը բավական ընդհանրական են և չեն նպաստում խնդիրների վեր հանմանը: Ինչ վերաբերվում է տվյալների մշակմանը հարկ է նշել, որ դրանք պատշաճ չեն փաստաթղթավորվում, օրինակ հարցման վերլուծությունները չեն պարունակում տվյալներ, երբ է իրականացվել, քանի մասնակից է եղել և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մինչև 2022թ. կիրառված հարցաթերթերը որոշակիորեն վերանայվել են, ավելացվել է հարցերի քանակը բաց և մասնագիտական բնույթի հարցերով: Հարցումները կազմակերպվել են նոր՝ էլեկտրոնային ձևաչափով: Նոր հարցարանների մշակմանը մասնակցել են ուսումական գծով փոխտնօրենը, կարիերայի պատասխանատուն, ՈՆԱԿ պատասխանատուն: Հարցարանները դեռևս չեն վերանայվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ քոլեջի կողմից 2023-2024 ուստարուց ձևավորվել է որակի ապահովման հանձնաժողով, որին անդամակցում են դասախոսներ, ուսանողներ, գործատուներ: Հանձնաժողովի աշխատանքները նպատակաուղղված են առկա

խնդիրների և կարիքների ուսումնասիրությանը: Այդ նպատակով կազմակերպվում են նաև ֆոկուս խմբային ֆորմալ և ոչ ֆորմալ հանդիպումներ, որոնց շրջանակում քննարկվում են ուսումնառության, փորձուսուցման և այլ բնույթի հարցեր:

Որակի ապահովման համակարգը քոլեջում նոր է ձևավորվում: Գործընթացները գտնվում են պլանավորման և իրականացման փուլում:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում ներկայացվել են անհրաժեշտ հիմքերը, որոշ վերլուծությունների արդյունքները, այդուհանդերձ երբեմն չի պահպանվել չափանիշի և առանձին չափորոշիչների պահանջը, մասնավորապես տեղեկատվությունը ներկայացվել է ոչ համապատասխան տիրույթում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը հիմնականում համակարգվել է ուսումնական գծով փոխտնօրենի կողմից և մասամբ՝ որակի ապահովման պատասխանատուի:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցները (գործատուները) որոշակիորեն ներգրավված են եղել ինքնավերլուծության աշխատանքներում, ինքնավերլուծության զեկույցը ներկայացվել է նաև Կառավարման խորհրդում: Չնայած վերոնշյալին, ՈՆԱԿ-ը դեռևս չունի ձևավորած գործիքակազմ իր գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման համար:

Որակի ապահովման ներքին համակարգի շարունակական զարգացման կամ պարբերական վերանայման տեսանկյունից քոլեջում դեռևս բացակայում են տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները և գործիքկազմը: Ներդրված են մի շարք փաստաթղթեր, իրականացվում են գործընթացներ, որոնց արդյունավետությունը դեռևս գնահատված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները, որը պլանավորվել և իրականացվել է 2020-2024 ՌԾ-ի շրջանակներում, թեև քոլեջը իր ռազմավարական պլանում չի սահմանել առանձին որակի ապահովման համակարգի զարգացման նպատակներ և խնդիրներ, այնուամենայնիվ կրթության որակի ապահովմանը միտված քայլերը ներառվել են ռազմավարական ծրագրի տարբեր ուղղություններում, վերոնշյալը փաստում է, որ կրթության որակը քոլեջի համար հանդիսանում է ռազմավարական առաջնահերթություն: Այդուհանդերձ փորձագիտական խումբը ընդգծում է, որ կրթության որակի իրականացումը չի կարող անջատ լինել որակի ներքին ապահովման համակարգից, որը միտված է ոչ միայն կրթական գործընթացների բարելավմանը այլ նաև ընդհանուր քոլեջի գործունեության բոլոր կողմերի գնահատմանը և բարելավմանը, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն են գործում կրթական գործընթացների վրա: Որակի ապահովման ենթակառուցվածքի և նրա տարրերի զարգացմանը միտված նպատակների և խնդիրների սահմանումը կնպաստի նպատակաուղղված աշխատանքների իրականացմանը, որն իր հերթին դրական ազդեցություն կգործի կառավարման համակարգի բարելավման վրա, նպաստելով տվյալահենք որոշումների կայացմանը և որակի ապահովման մշակույթի ձևավորմանը և տարածմանը:

Փորձագիտական խումբը ընդգծում է, որ ներկա փուլում որակի ներքին ապահովման կենտրոնը թեև կազմակերպական կառուցվածքում ներկայացվում է որպես ինքնուրույն ենթակառուցվածք, սակայն պաշտոնի անձնագրով և կենտրոնի կանոնակարգով կառույցի աշխատանքները վերահսկվում են փոխտնօրենի կողմից, ինչպես նաև որակի պատասխանատուի գործառույթներում առկա են այլ ստորաբաժանումների հետ համատեղ իրականացվող աշխատանքներ օրինակ՝ օտար լեզվի դասընթացի ծրագրի մշակումը, քոլեջի հետազոտական աշխատանքների պատասխանատվությունը: Վերոնշյալը չի նպաստում ՈՆԱԿ-ի անկախությանը և հավաքագրված տվյալների օբյեկտիվությանը, ինչպես նաև հավաստի տվյալների հիման վրա որոշումների կայացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների գործուն ներգրավվածություն որակի ապահովման գործընթացներում, որը ներկա փուլում սահմանափակվում է հարցումներին մասնակցությամբ: Շահակիցների ներգրավվածության ընդլայնումը կնպաստի որակի ապահովման գործընթացների թափանցիկության և հրապարակայնության ապահովմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև որակի ապահովման մեխանիզմների շարունակական բարելավումը, այս տեսանկյունից քոլեջը իրականացնում է հարցումներ տարբեր շահակիցների շրջանում, որոնք վերջին տարիներին բազմազանեցվել են, սակայն կիրառվող հարցարանները լիովին չեն նպաստում խնդիրների վեր հանմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ պարբերական իրականացվող հարցումների արդյունավետության գնահատումը կնպաստի դրանց բարելավմանն ու թիրախային խնդիրների վեր հանմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՈՆԱԿ-ի գործունեության անկախությունն ապահովված չէ, գործընթացները համակարգող փաստաթղթերը դեռևս լիարժեք կիրառություն չեն գտել, կարիքներ վեր հանող մեխանիզմները խնդիրներ բացահայտող չեն, հարցարանները կարիք ունեն վերանայման, ՊԻԳԲ շրջափուլը լիարժեք չի գործում, որակի մշակույթը տարածված չէ, ՈԱ գործընթացները չեն հրապարակվում և տարածվում, փորձագիտական խումբը գտնում է, որ Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Ասյա Սիմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

27-ը դեկտեմբերի 2024թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1.**Ասյա Սիմոնյան**՝ 2013թ-ին ավարտել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության մագիստրոսական ծրագիրը: 2017թ.-ին ավարտել է ՇՊՀ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական կուլտուրա)» մասնագիտության ասպիրանտուրան: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2005-2007թթ. աշխատել է «Գյումրու մարմնամարզիկ» ՓԲԸ-ում՝ որպես գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, 2007-ից աշխատում է Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում, որպես մարզիչ-մանկավարժ, 2013-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ ներկայումս Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ է: 2017 թվականից հանդիսանում է գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար: 2021թ-ից անդամակցում է ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդին: Հրատարակել է 13 գիտական հոդվածներ հանրապետական և միջազգային նշանակության պարբերականներում: 2004թ. -ին ստացել է ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետի կոչում: Գեղարվեստական մարմնամարզության հանրապետական և միջազգային առաջնությունների բազմակի հաղթող և մրցանակակիր է: 2008թ. Աշխարհի գավաթի, 2010թ. Աշխարհի առաջնության և 2012թ. Աշխարհի ակումբային առաջնության մասնակից է: 2013թ. -ին Մագիստրոսի կրթական ծրագրով ճանաչվել է հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակակիր (սպորտի ոլորտում): 2015թ. ստացել է «Պատվոգիր» ՀԱՕԿ-ի կողմից՝ ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում ունեցած մեծ ավանդի, գեղարվեստական մարմնամարզությունը և օլիմպիական գաղափարախոսությունը մասսայականացնելու համար:

2.**Գոհար Սարգսյան**՝ 1997թ. ավարտել է Երևանի պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետը, իսկ 1998թ.՝ ինտերնատուրան: 1999թ.-ից մինչ օրս աշխատում է Երևանի հենակետային բժշկական քոլեջում, եղել է վերակենդանացման, աղետների բժշկության, քաղաքացիական պաշտպանության, անվտանգության և առաջին բուժօգնության ամբիոնի դասախոս, ապա՝ մեթոդիստ: 2021թ.-ից՝ կրթության որակի ապահովման պատասխանատուն է: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների:

3.**Շուշանիկ Ասրյան**՝ 1991 թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը (Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) «Հաշվապահական հաշվառում և տնտեսական գործունեության վերլուծություն» մասնագիտության դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանը: 2008թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Արդյունաբերության ճյուղային կառուցվածքի կատարելագործման հիմնախնդիրները ԼՂՀ -ում» թեմայով: Տնտեսագիտության թեկնածու է: 2001-2003թթ. աշխատել է Արցախի «Մեսրոպ Մաշտոց համալսարան» ՍՊԸ-ում որպես տնտեսագիտության դասախոս, 2003-2021թթ.՝ Արցախի պետական համալսարանի Տնտեսագիտության տեսություն և կառավարում ամբիոնում՝ սկզբում որպես դասախոս, այնուհետև՝ դոցենտ, իսկ 2020թ.-ից

նույն ամբիոնի վարիչ: 2013-2014թթ. եղել է ԱրՊՀ Տնտեսագիտության Ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար: 2011-2015թթ. որպես դասախոս մասնակցել է ԼՂՀ քաղծառայողների վերապատրաստման դասընթացներին: 2023թ. հունիսից առ այսօր աշխատում է Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի և կից բազային քոլեջի ՈԱ պատասխանատու: Տնտեսագիտության ոլորտում մի շարք հոդվածների և մեթոդական ուղեցույցների հեղինակ է, «Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի որակի ներքին ապահովման ձեռնարկ»-ի՝ համահեղինակ:

4. Անգելինա Տոնոյան՝ սովորում է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում» բաժնում: 2023թ. մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	16.09.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:30	12:10	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:20	13:20	60 րոպե
5.	Հանդիպում շրջանավարտների հետ	13:30	14:30	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	14:40	15:30	50 րոպե
7.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	15:40	16:30	50 րոպե
8.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	16:40	17:40	60 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:50	18:20	30 րոպե

N.	17.09.2024 թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսումներ		09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ		10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ		11:50	12:40	50 րոպե
4.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ		12:50	13:30	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:40	14:40	60 րոպե
6.	Հանդիպում «Ատամնատեխնիկական գործ», Կոսմետիկա, դիմահարդարման արվեստ» «Քույրական գործ» մասնագիտության կրթական ծրագրերի պատասխանատուի հետ		14:50	15:40	50 րոպե
7.	Զուգահեռ հանդիպում «Ատամնատեխնիկական գործ» և «Կոսմետիկա, դիմահարդարման արվեստ» մասնագիտության կրթական ծրագրերի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	15:50	16:40	50 րոպե

8.	Զուգահեռ հանդիպում «Ատամատեխնիկական գործ» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Կոսմետիկա, դիմահարդարման արվեստ» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Քույրական գործ» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	16:50	17:40	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:50	18:30	40 րոպե

N.	18.09.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (արտաքին կապերի և միջազգայնացման պատասխանատու, կարիերայի և պրակտիկայի պատասխանատու, հաս. հետ կապի և գովազդի պատասխանատու, հաշվապահ) ղեկավարների/հանձնաժողովների հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում ՈՆԱ պատասխանատուի հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Բաց հանդիպում	11:50	12:30	40 րոպե
4.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:40	13:30	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:40	14:40	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:50	16:50	120 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:00	17:20	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Քոլեջի առաքելություն վերանայման քաղաքականություն	1
2.	Հարցումների արդյունքներ, արձանագրություններ	1
3.	«Քոլեջի 2020-2024թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանը	1
4.	Նախորդ տարիների հաշվետվությունները ՌԾ հաստատման պահից սկսած: (Հավելված 1.3.1՝ Տնօրենի տարեկան (2023-2024ուստարի) հաշվետվություն):	1
5.	Ստորաբաժանումների պլաններ և հաշվետվություններ ՌԾ ընթացքի համար	1
6.	2023-2024 աշխատանքային ծրագրերը	1
7.	2021-2023 միջնաժամկետ ծրագրի հաշվետվություն (Տնօրենի)	1
8.	Խորհուրդների նիստերի արձանագրություններ	2
9.	Ռեսուրսների որակի և սոցիալական շահի կախվածության կապի հիմքեր	2
10.	Հարցումների վերլուծությունները	2
11.	Դասախոսների և ուսանողների բարձրացված հարցերով արձանագրություններ	2
12.	Վերստուգիչ հանձնաժողովի հրաման այլ փաստաթղթեր, որ վկայում են հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքները	2
13.	Ամբիոնների արձանագրություններ	2
14.	2023-2024 -տարվա ՌԾ գործողությունները	2
15.	Աշխատանքային պլաններ և հաշվետվություններ	2
16.	SWOT վերլուծությունով հաշվետվության օրինակներ	2
17.	Դասալսումների օրինակներ	2
18.	Երեք ՄԿԾ-ների վերանայված մասնագրերը ուսումական գործընթացների կազմակերպման, նորմատիվ փաստաթղթերի	3
19.	Պրակտիկայի օրագրեր յուրաքանչյուր ԿԾ-ից, լրացված	3
20.	Պրակտիկայի գործող ծրագրերը երեք ՄԿԾ ների համար	3
21.	Գործատուների հետ հանդիպումների արձանագրություններ	3
22.	Մասնագիտական ծրագրեր. «Մանկաբարձական գործ», «Դեղագործություն» Ուս.պլան «Մանկաբարձական գործ»	3
23.	Պայմանագրեր, Պրակտիկայի ծրագրեր	3
24.	Ընտրովի և նախասիրական առարկաների ծրագրերը	3
25.	Հանձնարարականների, առաջադրանքների օրինակներ	3
26.	Օրվա դասի պլան	3
27.	Դասալսումների օրինակներ	3
28.	«Դեղագործություն» հարցաշարեր, խնդիրները «Ատամնատեխնիկական գործ գործնական առաջադրանքներ»	3
29.	Իսպանիայի կողմից արված բենչմարքինգի օրինակը	3
30.	Կրթությունը շարունակած ուսանողների թվաքանակն ու հաստատությունները	3
31.	ՄԿԾ մշտադիտարկման արդյունքները ըստ ԿԾ-ների	3

32.	Վարձերի փոփոխության հետ կապված քննարկումների արձանագրություններ	4
33.	Իրավապահական հանձնաժողովի աշխատանքների արձանագրություններ	4
34.	Ուսման վարձի փոփոխության վերաբերվող արձանագրություններ	4
35.	ՈՒԽ կանոնակարգ	4
36.	Կարիերայի պատասխանատու աշխատանքների պլան, հաշվետվություն	4
37.	Հետազոտական աշխատանքներ	4
38.	Դասախոսի պաշտոնի անձնագիր	5
39.	Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականություն	5
40.	Խրախուսման հրաման	5
41.	Թափուր տեղի մրցույթի տոմսեր, հարցաշարեր	5
42.	Պաշտոնի անձնագրեր	5
43.	Ամբիոնի գիրք, աշխատանքային պլաններ, նիստերի արձանագրություններ	5
44.	Դասավանդողների հարցման, գնահատման արդյունքների վերլուծությունը	5
45.	Լրացված դասախոսի գնահատման ձևաթերթեր	5
46.	Ամբիոնների գնահատման հարցարանները և արդյունքները	5
47.	Դասալսման ձևաթերթերի լրացված օրինակներ, դասալսման ժամանակացույց,	5
48.	Շրջանավարտների հարցարանը և արդյունքները, լրացված հարցաթերթեր	5
49.	Ուսանողների հարցման հարցաթերթիկների լրացված օրինակներ	5
50.	Ուսանողների կողմից դասախոսի և իր վարած դասի գնահատման հարցաշարի արդյունք/օրինակ/:	5
51.	Վերապատրաստումների պլան ժամանակացույց	5
52.	Կոնֆերանսների/ սեմինարների վերապատրաստումների մասնակիցների ցանկ վերջին երեք տարիների համար	5
53.	Որ հեղինակներն են ստացել ֆինանսական աջակցություն կամ որ հոդվածների համար է իրականացվել ֆինանսավորում	5
54.	Ռեֆերատների և այլ հետազոտական աշխատանքների օրինակներ	6
55.	Խմբային հետազոտական բնույթի աշխատանքի օրինակ	6
56.	Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում քոլեջի աշխատողների հրապարակումները	6
57.	«Հետազոտական բաղադրիչ» լրացուցիչ դասընթացի ծրագիրը	6
58.	Բյուջեի պլանավորման փաստաթղթեր, կատարողական	7
59.	Նախահաշիվ վերջին երեք տարիների համար	7
60.	Հաշվետվություններ	8
61.	Պայմանագրեր, որոնք առկա են գործատուների հետ ուսանողների պրակտիկայի իրականացման համար	9
62.	Հարցման հարցաշարերը և արդյունքները	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. Ստորաբաժանումներ,
3.Ատամնատեխնիկական գործի լաբորատորիա
4. Կոսմետոլոգիայի կաբինետ-լսարան

Կլինիկական բազաներ

1 .«Արմենիա» բժշկական կենտրոն
2 .«Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն
3 .«Իդեն» Էսթետիկական կենտրոն
4 . .«Բելլա Դենտ» ստոմատոլոգիական կենտրոն

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԳՄՍ նախարարություն- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր
ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ
ՄԿՈՒ- Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ- որակի ապահովում
ՈՆԱԿ- Որակի ներքին ապահովման կենտրոն
ՊԻԳԲ- պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
ՈԱԱԿ - Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ
ՌԾ- ռազմավարական ծրագիր
ՈԻԽ- ուսանողական խորհուրդ
ՈԻՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ
ՏՀՏ -տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ